

ՆՈՐ ՇՐՋԱՆ
Գ. ՏԱՐԻ

1929 — ՅՈՒՆԻՍ
Թ Ի Ի 6

Ս Ի Ո Ն

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԱՐԲՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ. Հայաստանայց Եկեղեցոյ քարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ. — 2. Եկեղեցոյ հեղինակութիւնը. — 3. ԿՐՕՆԱԿԱՆ. Զի՛նյ է նշմարութիւն. Ֆ. Յ. Մ. — 4. ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ. Վագֆ Վըր կապոյտ երկինքին մէջ. Comtesse de Noailles. Թրգիլ. Ե. Ե. Դ. — 5. ՊԱՏՄԱԿԱՆ. Գողգոթայի եկեղեցիին հայկական յիշատակները. Մ. Ե. Ա. — 6. Կրկիկոյ կարողիկոսները. Ագարիա Ջուղայեցի. Բ. Ե. — 7. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ամովսա «Հարժօնայ»ն եւ Հայաստան. Ս. Տէր Մ. Գրիգորեան. — 8. ՄԱՏԵՆԱԽՕՍՍԱԿԱՆ. Յովհաննէս արսևաքան, Թ. դար. Յ. Օշական. — 9. Յուշեր Նիշեր. Ասրուշան. — 10. ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ. Ս. Եփրեմի Ասորոյ վիշտասան ասացումս՝ վասն Նիկովիոյսայ փառաբան. Ֆ. Յ. Մ. — 11. Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ:



ՄԻՈՆ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Գ. ՏԱՐԻ — ԿՈՐ ՇՐՋԱՆ

1929 — ՅՈՒՆԻՍ

ԹԻԻ — 6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԲԱՐԵԿԱԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԽՆԳԻՐՆԵՐ


Է.

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՈՆԻ-ԹԻՒՆԸ

2. — ՆԿԱՐԱԳԻՐ

Նկարագիր՝ ամենէն շատ յեղյեզուած բառն է արդի լեզուներու և բարբերու մէջ: Բայց ի՞նչ է ասոր նշանակութիւնը երբ անձի մը նկարագրին վերայ է խնդիրը: Մեր ընթացիկ հայերէնի մէջ caractère բառին համար և նկարագիրը, և հոգեբանական ու բարոյագիտական առումով կը նշանակէ անձի մը բնաստիւթիւնը, յատկութիւնը: Իսկ caractère ամենէն յատուկ կը նշանակէ գիր, ատմ, և հին հայերէնով՝ նշանակիր: Արդ՝ լեզուի մը յատկութիւնը արտայայտելու մէջ ի՞նչ որ են իր այբուբենքին գիրերը, անձի մը բնաստիւթիւնը կամ յատկութիւնը արտայայտելու մէջ ալ նոյն է նկարագիրը. այսինքն մարդու բարոյական արժէքին որո՞ւ, յսակ գիծերը կամ գիւղերը: Ինչպէս որ լեզուի մէջ այբը այբ է միշտ և չի շփոթուիր նէի կամ ֆէի հետ, այսպէս ալ անձի մը բարոյական այբուբենքին (նկարագրին) մէջ գիրերը պիտի չշփոթուին իրարու հետ: Երբ կ'ըսենք թէ այսինչ մարդը նկարագիր չունի կամ աննկարագրին մէկն է, այդ որակումով կ'ուզենք ըսել թէ այդ մարդուն բարոյական արժէքին զիծերը ո՛չ միայն որոջ և յստակ չեն, այլ նաև գիրերը իրարու հետ շփոթուած են: Այդպիսի մարդոց բարոյական կեանքին այբը ունէ ատեն կրնայ փոխուիլ և շփոթուիլ այբուբենքի միւս բոլոր գիրերուն հետ: Այսօր եթէ այբ է մարդուն նկարագիրը, վաղը նէ կամ ֆէ է. չես կրնար ճշգրտել անոր բարոյականին և հոգիին զիծերը:

Քրիստոնէական բարոյականի սկզբունքներէն մէկն է որ քրիստոնէայ մարդուն նկարագիրը պէտք է ըլլայ որոջ, յստակ, այնքան որոջ և յստակ որ չըփերցնէ ունէ մեկնութիւն և տեղի չտայ ունէ կասկածի: Չեր այն այն՝ և ոչն ո՛չ ըլլայ: Ճիշտ շիտակ, ճիշտ, որոջ, յստակ: Եւ արդէն նկարագրի այս պարզութեան և յստակութեան վրայ է խնդիրը, երբ կը խօսինք հոգևոր պաշտօնեայի բնաստիւթեան մասին:



140-98

Պէտք է ուշադրութիւն ընել որ այժմիս և ո՛չիս յստակութիւնը չչփոխուի յամառութեան հետ. վասն զի յամառութիւնը պարզապէս կամակորուրթիւն է. բարոյական ուրիշ թերութիւն մը, որ կապ ունի մարդու ֆիզիքական տեսակ մը ախտաւոր պայմաններուն հետ: Ասիկա երկարի կամք ալ չէ. վասն զի այս բացատրութիւնը կ'արտայայտէ մարդու հոգեկան արիւթիւնը ճշմարտութիւնները պաշտպանելու մէջ, ամէն գնով: Յամառը և երկարի կամք ունեցողը իրարմէ բոլորովին տարբեր մարդիկ են իրենց նկարագրով: Յամառը սուսին և սխալին մէջ ալ յամառ է:

Արդ, կոչումէն ետքը նկարագրի՛րը պիտի ըլլայ առաջին փնտռուելիք յստակութիւնը հոգևոր պաշտօնի թեկնածուներուն վրայ. վասն զի նկարագրին է որ հոգևոր պաշտօնեային կուսայ իրեն որոշ տեղը իր պաշտօնին մէջ: Ժողովուրդին վստահութիւնը զրաւելու, իր խօսքին և կենցաղին հեղինակութեամբը ժողովուրդին առաջնորդելու գաղանիքը պէտք է փնտռել եկեղեցականին նրկարագրին մէջ:

Պիտուած է որ յեղեցեղուկ նկարագրով կամ աննկարագիր եկեղեցականներ վտանգաւոր եղած են եկեղեցւոյ մէջ ամէն կերպով: Այդպիսիներ վտանգած են նոյն իսկ իրենց անձնական շահերը, և որովհետև յեղեցեղուկ են, ստիպուած են ըլլել ամէն հոսանքէ. միշտ գլտորիլ է իրենց ճակատագիրը մինչև որ զարնուին ժայռի մը և փշրուին և կամ իյնան անդունդ մը և կորսուին:

Նկարագրի՛րը միայն իր բարոյական ու կենցաղագիտական արժէքին համար չէ որ կը փնտռուի մարդու մէջ, այլ նաև անոր սկզբունքներուն և համոզումներուն հետ ալ սերտիւ կապուած է ան: Մարդը ի՞նչ բանի կը հաւատայ, ի՞նչերով կը հետաքրքրուի կեանք ըսուած զարմանալի իրականութեան մէջ, ի՞նչպէս կ'ըմբռնէ իր անձնական պարտաւորութիւններն ու պաշտօնական պատասխանատուութիւնները, ի՞նչպէս կը գործէ, կ'աշխատի, — ասոնք բոլոր մարդու նկարագրին ճառագայթումներն են: Հոգևոր պաշտօնեայն պէտք է ունենայ նկարագիր մը յստակ դիժերով, անյեղի, անշեղ, և, ինչպէս կ'ըսուի, ազամանդէ նկարագիր մը, որովհետև միայն ան է իր զօրութիւնը, իր հարըստութիւնը, իր յենարանը, իր գործունեայ կեանքին ամրոցը: Հոգևոր պաշտօնեայն իր նկարագրով միայն կրնայ տոկալ դժուարութիւններու և համբերել՝ հնարաւորութեան լաւ տրամաբանուած սահմաններուն մէջ, և ցոլացնել իր սուրբ պաշտօնին ոգին, որով պիտի ոգևորուի նաև հաւատացեալներու բազմութիւնը:

Ամէն գործի մէջ վստահութիւն ըսուած վիճակը մեծ գրամագլուխ մըն է մարդոց համար կամ զօրութիւն մը, որուն կը կռթնին մարդիկ և կ'ընեն իրենց գործաւնութիւնները, նիւթական ըլլան ասոնք կամ բարոյական: Իսկ վստահութիւնը ուրիշ բան չէ ըստինքեան եթէ ոչ նկարագրի պարզ խնդիր մը:

Հոգևոր պաշտօնեայն պէտք է որ վստահութիւն ներշնչէ իր պաշտօնին բոլոր կողմերուն վրայ: Պէտք է խոստովանիլ որ մեր եկեղեցւոյ ժողովուրդը, մանաւանդ անոր առաջնորդող գաղափարը, առհասարակ չի ներշնչուիր իր հոգևոր պաշտօնեաներէն: Հոգևոր պաշտօնեան տեսակ մը մերեւոյ է անոնց աչքին, որ արարողութիւններ կը կատարէ, խորհուրդներ կը մատակարարէ, իբրև պահանջ ձեւականութեան. այն՝ բարեկամ մը, խորհրդատու և խրատատու

մը չէ այլևս : Խոստովանութիւնը, զոր օրինակ, որ եկեղեցւոյ ներքին կեանքին զօրութեան և սրբութեան ազգակներէն մէկն է քրիստոնէութեան մէջ, կորսնցուցած է իր գործնական նշանակութիւնը . չկայ խոստովանութիւն բառին բուն իմաստով, վասն զի չկայ վստահութիւն և փոխադարձ վստահութիւն . և չկայ վստահութիւն, վասն զի եղծուած է նկարագիրը խոստովանութեան պաշտօնեային :

Մեր Փրկչին մարդկային կեանքին ու կենցաղին մէջ իր ամէնէն տիրական դիժն եղաւ իր նկարագիրը, ձեր այոն այո՛ եւ ոչն ո՛չ ըլլայ ըսողին նկարագիրը, որ հաւատարմայէս փայլեցաւ ինչպէս տաներկու տարեկան պատանի Յիսուսին, նոյնպէս Գողգոթայի վրայ խաչուած Փրկչին վրայ :

Նկարագրին ամէնէն գրաւիչ ստորագելիքներէն մէկն է բարութիւնը : Այոն այո՛ եւ ոչն ո՛չ ըսող մարդը չի կրնար չաւ ըլլալ : Չար մարդը կարելի չէ որ հոգեորական ըլլայ : Կրնայ սքեմաւորուիլ, եկեղեցական ձեանալ, բայց ասիկա չի նշանակեր թէ այդ մարդը հոգևոր պաշտօնեայ եղաւ : Առակախօս Վարդան վարդապետի խօսքով՝ կատուին փիլոն տուեր են և կարծեր է որ կրօնաւոր եղաւ : Չար մարդը իր նկարագրովն իսկ հակառակ է կրօնքին : Չար մարդը չի կրնար նաև ուսուցիչն ըլլալ կրօնքին . վասն զի կրօնքը հակառակ է չարութեան : Հազարգական է բարութիւնը : Կը ծաւալի ան օծութեան իւղին պէս : Եթէ ստոյգ է որ չարերը երգ չունին, աւելի իրաւամբ կարելի է ըսել չարերը սէր չունին, տեսիլ (vision) չունին, անսնք չեն կրնար քաջ հովիւին պէս ինքզինքնին նուիրել իրենց նպատակին : Անոնք գաղափար իսկ չունին անձնուիրութեան և պատասխանատուութեան մասին : Չարը այլամերժ է : Իսկ հոգևոր պաշտօնեայն պէտք է ըլլայ այլասէր : Ապրիլ ուրիշներուն համար, ծառայել այլոց, բարի եկեղեցականին նկարագիրն է ասիկա :

Աւետարանի մէջ աղուոր պատկեր մը կայ : Երբ Յիսուս կը տեսնէ Նաթանայէլը, կը բացազանչէ, Անա՛ մարդ մը որուն ներքը նեղութիւն չկայ : Հարկ չկայ հետաքրքրուելու թէ, — ինչպէս որ ինքն Նաթանայէլ ալ հետաքրքրուեցաւ, — ինչէ՞ն գիտցաւ Յիսուս ասիկա : Չըսենք թէ ամենազէտ էր Յիսուս և գիտցաւ : Ո՛չ . շատ պարզ է խնդիրը . աննենդութիւնը ինքնին կը պոռայ, կ'ազգակէ մարդու բոլոր շարժումներուն և արտայայտութիւններուն մէջ : Եւ Յիսուս գոհացուց Նաթանայէլին հետաքրքրութիւնը . — ես քու աղօթելու կերպէն գիտցայ թէ աննենդ, բարի մարդ մըն ես գուն : Գուն կ'աղօթէիր թղենիին տակ և ես անկից կ'անցնէի պատահաբար . տեսայ քեզ : Այսպիսի միայն : Ամէնէն սովորական և ամէնէն աննշան պարագաներու մէջ ինքնին կը յայտնուի մարդուն նկարագիրը : Երկար բարակ հետազօտութիւն, քննութիւն փորձեր, աւելորդ բաներ են շատ անգամ՝ ճանչնալու համար մարդը : Խօսք մը, դէպք մը, շարժում մը, ձե մը, արտայայտութիւն մը բաւական է որ ներքին մարդը երևան գայ :

Բարեկարգելու համար Հայց. եկեղեցւոյ պաշտօնէութիւնը պէտք է թեկնածուներուն վրայ փնտուել կոչումի հետ նաև նկարագիրը և բարի նկարագիրը :



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գաղթավայրերու մէջ Հայց. Եկեղեցւոյ կազմակերութիւնը այնպիսի երկոյթ մըն է, որուն նշանակութիւնը ս'ըջափ չհշատի քիչ է: Քանիցս ասիթ ունեցանք զիսկ տալ մեր խմբադրականներուն մէջ թէ Հայաստանեայ Եկեղեցին է այն միակ հաստատութիւնը, որ պիտի կրնայ հայը հայ պահել իրբեւ ազգային գանգուած, եւ ասոր համար արտագին հրճուանքով ողջունելինք ու կ'ողջունենք այն բոլոր ձեւնաբերները որոնց նպատակն է կազմակերպել մեր Մայրենի Եկեղեցին գաղթավայրերու մէջ:

Ենթերիւ իր Մայրենի Եկեղեցւոյն է որ հայը պիտի կրնայ պահել իր ինքնութիւնը նոյնիսկ Եւրոպայի եւ Ամերիկայի պէս ընկուղիչ միջավայրերու մէջ, իսկ ընդհանրապէս իսլամ նիպարադիր ունեցող երկիրներու մէջ, զոր օրինակ, Նեղոսէն մինչեւ Տիգրիս տարածուող երկիրներ, ուր յարանուանական մրցակցութիւններ կան եւ յետոյ կան մասնաւոր գրութիւններ եւ դիւրութիւններ մարդորսութեան, հոն աւելի եւս կը շեշտուի եւ զգալի կ'ըլլայ Հայց. Եկեղեցւոյ կազմակերպուած ու բարեկարգ վիճակը:

Գաղթավայրերու մէջ մեր ժողովուրդը, իր բնաշխարհի կորուստին եւ իր տնտեսական կեանքին կործանման հետեւանքով, չի կրնար մրցիլ օտարներու եւ այլազաւաններու հետ, որոնք հարուստ են եւ մէկէ աւելի միջոցներ ունին իրենց գործունէութիւնը գունաւորելու եւ իրենց նպատակը հետապնդելու համար: Անոնք կրնան իրենց իրաւունքին մէջ նկատուիլ: Իսկ Հայց. Եկեղեցւոյ ժողովուրդին համար բաւական չէ զիստալ թէ օտարներ եւ այլազաւաններ կը գործեն, կ'աշխատին եւ յաջողութիւններ ձեռք կը բերեն: Ո՛չ ալ ուրիշ կարեւորութիւն կամ օգուտ ունի գանգատիլ անոնց դէմ, ո՛չ ալ արժամարհել մեր կարճ միջոցները եւ բանի տեղ չդնել մեր ունեցած ոյժերը, զպրոցական եւ եկեղեցական շրջանակներու մէջ, այլ պարտաւոր ենք ընել ի՛նչ որ կրնանք եւ ի՛նչ որ կարելի է: Հայաստանեայ Եկեղեցւոյ գիրքը այս իրականութեան մէջ պէտք է որ յարգուի իր բոլոր գաւակներու կողմէն հաւասարապէս. վասնզի, կրկնենք անգամ մըն ալ, այս եկեղեցի'ն է որ կրնայ պահել պահպանել Հայութիւնը, իր հոգեւոր շունչով եւ ազգային հմայքով: Սիտն, բարերախտարար, մինակ չէ իր այս հաւաստումին մէջ: Այսպէս կը խորհին նաեւ մեր ժողովուրդին լուրջ եւ փորձառու գաւակները, եւ հաճոյքով կը գիտենք որ հայ մամուլին մէջ ալ միեւնոյն հաւաստումը եւ համոզումը կ'արտայայտուի մերթ ընդ մերթ:

Եւ որպէս զի Հայց. Եկեղեցին կարենայ իր բարերար գերը կատարել հայ գաղթավայրերու մէջ, հարկ է որ յարգուի անոր հեղինակութիւնը: Սկզբունքի խնդիր մըն է ասիկա: Աւելորդ ժամափաճատութիւն պիտի ըլլայ գէմքերու եւ գէպքերու, ձեւերու եւ պաշտօնականութիւններու վերածել սկզբունքի այս խնդիրը: Ասոնք երկրորդական են սկզբունքին քով, որուն շիտակ ըմբռնումը կրնայ լաւագոյն ուղղութիւնը տալ արող մտայնութեան, որ առհասարակ դժգոհ է ամէն բանէ եւ ըմբոստ հանդէպ եկեղեցւոյ հեղինակութեան:

Մեծ պատերազմէն յտանջ, հայ ժողովուրդը իր բնաշխարհին մէջ, իրբեւ հետեւանք տիրող կանոնաւոր վիճակին, կը յարգէր օրէնքը, նախանձախոնդիք էր կարգուկանոնի պահպանութեան, եւ Եկեղեցին ալ ի վիճակի էր իր հեղինակութիւնը յարգել տալու: Պատերազմէն ետքը պայմանները փոխուեցան, ժողովուրդը ցրուեցաւ իրարմէ տարբեր միջավայրերու մէջ, իր առտնին կեանքը եւ իր տնտեսական վիճակը ենթարկուեցան նոր եւ անսովոր յեղաշրջումներու, իսկ իր ընկերային եւ իր սզգային կեանքին աւանդական ըմբռնումները գրեթէ այլաբերեցան: Ասոնք ցնցումներ էին հայ ժողովուրդին համար, եւ ցնցումներ չէին կրնար մշտապէս ըլլալ: Քիչ ետքը ողջմտութիւն եւ պայծառատեսութիւն բուսած բնական ոյժերը պիտի արթննային իր ներքը եւ պիտի հարկադրէին զինքն կազմակերպուելու՝ կեանքի եւ միջավայրի նոր պահանջներուն համեմատ, եւ հիմայ անցման այս շրջանին մէջ է որ հայ ժողովուրդը կ'ըզայ եւ կը զը-

նահատէ իր Մայրենի Եկեղեցւոյն կազմակերպութեան պէտքը: Այս ողջունելի և քաջակերական իրականութիւնը, սակայն, չի կրնար հասնիլ իր նպատակին, եթէ առանց այլևայլի չյարգուի Հայց. Եկեղեցւոյ հեղինակութիւնը ամէնէն յառաջ իր զաւակներու կողմէն:

Ըստ մեզ երկու պիտուր կէտերու ուշադրութիւն պէտք է դարձնել՝ սխալ և թիւր գաղափար չկազմելու համար Հայց. Եկեղեցւոյ հեղինակութեան մասին:

Առաջին կէտը.— Հայց. Եկեղեցին ամէնէն յառաջ հոգևոր հաստատութիւն մըն է, հայ ժողովուրդին կրօնական գաստիրակութեան դարաւոր և փոռաւոր դպրոցը և անոր առկունսութեան ու գործունէութեան ներշնչարանը: Հայ ժողովուրդը պէտք է որ իր կարճ և տկար միջոցներով իսկ օժանդակէ իր Մայրենի Եկեղեցւոյն հոգևոր նկարագրին անվթար պահպանութեան: Հայ ժողովուրդին ծանօթ եկեղեցասիրութիւնը և անոր նուիրումները իր եկեղեցին պայծառ պահելու նախանձախնայութեան մէջ, սյմեր և ապահովութիւններ են ամէն կերպով: Այս առաջին կէտին մէջ ըլլալիք զոհողութիւնը բարոյական արժէք մը ունի գրեթէ: Եւ հարկ է որ ընենք այս զոհողութիւնը առանց վերապահութեան:

Երկրորդ կէտը.— Հայց. Եկեղեցին առանցքը եղած է, միշտ իր հոգևոր նշանակութեամբ և հեղինակութեամբ, մեր ժողովուրդի ընկերային կեանքի խնդիրներուն: Եկեղեցին է որ կը հակէ հայ ժողովուրդի, զոր օրինակ, ամուսնական, կրթական, վարչական և այլն գործերուն: Եւ հիմա՞յ ալ բոլոր գաղթավայրերու մէջ, քրիստոնեայ թէ իսլամ, Հայաստանեայց Եկեղեցին է որ կը ներկայացնէ հայ ժողովուրդը, և մասնաւորապէս իսլամ գաղթավայրերու մէջ բացարձակապէս Հայց. Եկեղեցիով է որ հայ ժողովուրդը կը ճանչցուի իրրու ազգային համայնք կամ զանգուած:

Մեր ժողովուրդին և մասնաւորապէս անոր գործունէայ զաւակներուն նուիրական պտրաքը պիտի ըլլայ յարգել իրենց Մայրենի Եկեղեցւոյն հեղինակութիւնը, որպէս զի ան կարենայ թէ՛ նոյն ինքն հայ ժողովուրդին ծոցը և թէ՛ տիրող և հովանաւորող կասալարութեանց առջև արդիւնաւորութեամբ կատարել իր առաջնորդի պաշտօնը: Աւրիշ խօսքով՝ ժողովուրդն է որ պիտի յարգէ իր եկեղեցւոյն հեղինակութիւնը և ոչ թէ եկեղեցին բռնի միջոցներով պիտի պարտադրէ իր հեղինակութիւնը ժողովուրդին վրայ: «Է՛ր երբեմն» որ եկեղեցին ունէր այդ բռնի կամ նիւթական միջոցները: Այսօր անցած են ատոնք, և լա՛ւ է որ անցած գացած են. վասն զի բռնապետութիւնը չէ՛ հոգևոր իշխանութեան մը նկարագիրը: Մեր եկեղեցւոյն ժողովուրդը իրեն բնածին ողջմտութեամբ և իրեն աւանդական երկրագործութեամբն է որ բարձր պիտի պահէ իր եկեղեցւոյն հեղինակութիւնը, և թոյլ պիտի չտայ որ ան նշաւակ ըլլայ անհատական նկատումներու և խմբակցական յայտնի կամ գաղտնի շահերու. վասն զի գաղթավայրերու մէջ, Հայց. Եկեղեցիէն և անոր հոգևոր իշխանութիւնէն գատ ոյժ մը, հաստատութիւն մը չունինք, պահելու և ներկայացնելու համար Հայութիւնը:

Եթէ մենք չյարգենք մեր հոգևոր իշխանութիւնը, իրաւունք չունինք պահանջել ուրիշներէ որ յարգեն զայն. եթէ մենք չկազմակերպենք մեր տկար և կարճ միջոցները կոթնելով մեր հոգևոր իշխանութեան, և զանոնք չզննք ի սպաս մեր ինքնապահպանութեան և ուժաւորման, իրաւունք չունինք սպասելու որ դուրսէն օգնութիւններ ընձևուուին մեզի:

Գիտնանք յարգը մեր ձեռքը մնացած բարոյական և նիւթական ոյժերուն :

ԿՐՈՆԱԿԱՆ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի Ս. ԳԻՐՍ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Քննեցի՛ք զգիրս: Յ՛ 5, 39:

Գ. (*)

ԶԻ՞ՆԵ՞ Է ՃՇՄԱՐՈՒԹԻՒՆ

«Զի՞նչ է ճշմարտությունը».— այս հարցում անպատասխան թողնում է զմարդկային միտքը. յորմէ՛ հետէ խորհող մարդ սկսու ազատագրել ի քննական նկատութիւն համարէ՛ն տիեզերաց և ի խորմէ՛ զննել զհամարաման աշխարհիս և կենաց, միշտ ջանացած է խելամուռ լինել զաղանկաց բնութեան և արարչութեան, խորագրաց լինել էութեան երեւելեաց և աներևութից, հետազոտել և խմանալ զսկզբնապատճառս և զիտելութիւն գոյութեան, այսինքն՝ հասու լինել իրաց ըստ ինքեանց, էութեան և նպատակի նոցանց:— Աստի՛ք է աշխարհս այս, զի՛մը՛ վասն է՞ր և ա ի՞նչ է. զի՞նչ է բուն իմաստն աշխարհիս, զի՞նչ է առեղծուածն կենաց և զի՞նչ է վախճանն նորին: Այս և սոյնպիսի հարցուածոց ի խնդիր կլամ են վերստին և վերստին անթիւ անհամար իմաստաւէրք ի հնումն և ի նորումն, և զուն զործած են բազմազիմի առաւել կամ նուազ հոյակապ զիտական յօրինաւոր օրինակօք և անական պայմանօք լուծանել զնոսին:

Ապաքէն խուզարկու հետազոտիչ միաք մարդոյս, մասնաւորապէս փիլիսոփայք հեթանոս հին ժամանակաց յընթացս դարոց վերահասու եղած են բազմապիսի նորանոր ծանօթութեանց, գտած են ինչ ինչ ճշմարտութիւնս, բայց սակայն չեն կարողացած զիտակ լինել բուն իսկ բացարձակ ճշմարտութեան: Միթէ՛ հնա՛ր ինչ ինչ լսկ զիտական ճանապարհաւ և սնով հասանել ի զիտութիւն ճշմարտութեան. արդեւք բընաւ իսկ կա՞յ ճշմարտութիւն, ո՞րք է նա և զի՞նչ է:— Ի կատարած ամենայնի, յետ

անչափ ճգանց, մարդկեղէն իմաստաւորութիւնն, յուսահատ և ի հարկէ բնականաւ, պարտէր խոստովանել թէ՛ քննողունայն է ի խնդիր կլանել ճշմարտութեան, զի անպոյ է այն.— յայտ իսկ է՛ թէ շի՛ք ինչ ճշմարտ. և այն միայն ստոյգ է՛ թէ ոչ ի՛նչ զիտեմք ստուգութեամբ:— Այս էր եղբակացութիւն հեթանոսական իմաստասիրութեան, ինքնորաւ և ինքնահաճ մարդկեղէն զիտութեան, զոր սքանչելիպէս և զիպողագոյնս կը նկարագրէ Պաւլոս Առաքեալ ի թղթին առ Հռոմայեցիս (Պղ. 1, 18—25), զայս ձեւ օրինակի.

«Քանզի յայանկոց է բարկութիւն Աստուծոյ յերկնից ի վերայ ամենայն ամբարշտութեան և անիրաւութեան մարդկոն, որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին [ճշգրիտ՝ կասեցուցանեն, կամ՝ արգելուն, կամ՝ խափանեն]: Վասն զի զիտութիւնն Աստուծոյ յայանի է ի նոսա, քանզի Աստուած իսկ յայանեաց նոցա: Զի աներեւոյթք [այսինքն՝ աներևոյթ էութիւն] նորա ի սկզբնէ աշխարհի արարածովքս [= իւր ստեղծած գործովք] իմացեալ [= խորհելով, մտախոհութեամբ] տեսանին, այսինքն է մշտնջենաւորութիւն և զօրութիւն [ճշգրիտ՝ մշտնջենաւոր զօրութիւն] և Աստուածութիւն [= Աստուածային բարութիւն] նորա, զի ո՛չ գտանիցին ամենեւին տալ տրատասխանի [= որպէս զի այլ ևս չկարենան ամենեւին զանձինս արդարացուցանել]: Ի ծաննան զԱստուած, և ոչ իբրև զԱստուած փառաբերեցին կամ գոհացան [զնմանէ], այլ նանրացան ի խորհուրդս իրեանց, և խաւարեցան անմըտութեամբ սիրտք նոցա [= անմիտ սիրտք նոցա]: Զանձինս առ իմաստաւորս ունէին, յիմարեցան [= յիմարեցան այնու զի գոնձինս առ իմաստունս ունէին]. և փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն եղծանելի մարդոյ և թռչոց և չորքատանեաց և սոյնոց. . . [և] որք փոխանակեցին զճշմարտութիւնն Աստուծոյ ընդ ստութեան, և հնազանդեցան [ճշգրիտ՝ երկիր պղպիւն] և պաշտեցին զարարածս և ո՛չ զԱրարիչն:»

Արդարեւ հեթանոս աշխարհի կրօնական և իմաստասիրական զարգացումն ժամանած էր ի խաւարածում կուպալաւորութիւն, ի զպարալի մարդապաշտութիւն և

(*) Տե՛ս Սիմն 1928, էջ 262 44. և էջ 330 45. և Սիմն 1929, էջ 68 44:

ի յուսակորոյս սկեպտիկան (յերկուանոց) աշխարհահայեցութիւն, որոյ զոչչեա իմն արձագանդքն են՝ որք կը հնչեն բերանով Պիղատոսի Պնտաջոյ, որ ամբարձաւաճ եւ հեղեութեամբ խոսն արհամարհանօք բացազանչեց՝ «Զինչ է նշնարտրիսն, — երբ դէմ յանդիման նորա կանդնած էր անձնաւորումն նշնարտրեան մտանապիս ինքնին զիստիկն, — Փրկիչն աշխարհի, իրբե հէք հալանուոր եւ մահապարտ»:

Հրէից ձերակոյսն, քահանայական կայրափա, ձերք եւ զպիրք, մասնութեամբ Յուզոյնի կայրալ զՅիսուս կ'ածնն կը հուննն զնա յատեանն իւրեանց, եւ յա կարճ խոսվայոյզ ամբոխալից հարցաքննութեան: յորում Յիսուս յայնապէս զանձն Քրիստոս եւ Որդի Աստուծոյ կը յայտարարէ, զնա իրբն զհայնոյնչ ի մահ կը դատապարտեն: Բայց որովհետեւ Հրէական ձերակոյսն յորմէ հեռէ Հրէաստան (Պաղեստինէ) Հռովմէական Պետութեան գաւառ եզած էր (յամի 6), չունէր այլեւ մահուան դատախանց գործադրութեան իրաւունքն, այլ այդ իշխանութիւն կենաց եւ մահու վերազանհալ էր միայն Հռովմայեցի Պրահորատորին (կուսակալին), հարկեցան տանել զՅիսուս կապեալ յատեանն Պիղատոսի, որ յայնժամ կուսակալ էր Հրէաստանի եւ միանգամայն զերագոյն դատաւոր (յամն 26—36):

Արդ, ձերակոյսն Հրէից՝ դատաջակայ ինդիրն Հռովմայեցի դատաւորին աւելի զիւրաճաւ եւ ընդունելի ընծայելոյ նպատակաւ՝ խորամանկութեամբ պատրաստած եւ մատուցած էր զիւր դատախազութիւնն, միանգամայն քաղաքական զոյն տալով դատին:

Ամբաստանութիւնն էր երեքկին սպումնաւ: նախ՝ զի Յիսուս խոսվարար է հասարակաց խաղաղութեան, եւ խոտորեցուցիչ ժողովրդեան, վասն որոյ չարագործ երկրորդ՝ զի արգելու ի տալոյ հարկս Կայսեր, ուստի ապստամբ, երրորդ՝ զի ստէր զանձնէ թէ Քրիստոսն իցէ, թագաւոր Հրէից եւ Որդի Աստուծոյ, ոմին իրի հայնոյնչ, յճր սակս ըստ Հրէական օրինաց պարտի մեռանել (Երկր. Օր. 13, 1—5 եւ Ղեւ. 24, 16), եւ զի մասնաւորապէս թագաւոր կոչէ զանձն իւր, ուստի հակասակ է Կայսեր, եւ ա՛յս իսկ, ըստ Հռովմէական

դատման, յայնապէս քրէական յանցանք էր (*) ընդդէմ Կայսեր Հռովմայեցոյ եւ Պետութեան, եւ բուն այս կէտ ամբաստանութեան հուսկ յետոյ վճահական թուեցաւ Պիղատոսի, որ եւ՝ կամելով հաճել զմիտս ամբոխին՝ հաւանեցաւ տալ զվճիռ մահապարտութեան (**):—

«Եւ Յիսուս եկաց ասաջի դատաւորին».— չէ՛ մարթ երեւակայիլ ասուել յուզիչ, անուել նարստալի, ասուել ահաւոր եւ սքոնչելահարաչ տեսարան քան զայն՝ զոր այդոյ արձանական սճով հաւմաստիւք կը նկարագրեն Աւետարանիչքն Մթ 27, 11—26. Մկ 15, 1—20. Ղկ 23, 1—25 եւ մանաւանդ ՅՏ 18, 28—19, 1—16:

Պիղատոս եւ Յիսուս, զէմ յանդիման միմեանց կանդնած, երկու տրեկերական պատմական իշխանութիւնք, հեթանոսութիւն եւ Քրիստոնէութիւն.— մին երեւեցուցիչ մեծագոր աշխարհակալ Պետութեան Հռովմայեցոյ, նստեալ յաթոս դատաւորական. իսկ մեւան՝ թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց, անկ՝ մեծաշուք եւ վեհափառ կերպարանօք, իրբե կալանաւոր, չորագործ եւ մահապարտ:

Պիղատոս հարցանէ զպատգամաւորս ձերակոսեալն. «զինչ չարախօսութիւն մատուցանէք զաննն զայնմանն»:—

Պատասխան. «Եթէ չէր չարագործ ալին այն, ապա ո՛չ մասնէաք զնա քեզ»:—

Պիղատոս արհամարհոտ հեղեութեամբ. «Առէք զնա դուք, եւ ըստ ձերոց օրինացն դատեցարուք»:—

Հրեայք զգալով զայսպանալից քամահանս դատաւորին կը հարկաւորին իւրեանց իշխանութեան չափաւորութիւնն խոտորմանել.— «Մեզ ո՛չ է արժան սպանանել զոք».— այսինքն՝ չունիմք զայդ իրաւունս:

Ապա Պիղատոս զսրովիչ հեղեութեամբ ասէ յամբաստանեալն. «Պո՞ւ ես թագաւորն Հրէից»:

Յիսուս երկակողմանի պատասխանելով.— «Ի քէն ասեա զայդ, եթէ ալք ասացին քեզ զիննն».— այսինքն՝ ըստ Հռովմէա-

(*) Լատ. crimen laesae majestatis.
 (**) Ըստ օրինաւոր սճոյ ասելով՝ condemnno, ibis in crucein, գատապարտեմ զքեզ ի խաչ կաւանել:

կան համ ըստ Հրէական տեսակետի է հարցումնդ այդ. արդեք պարտիմ պաշտպանել անձինս ընդդէմ ամբաստանութեան Հսովմայեցի՞ դատաւորին՝ թէ եւ խոսովարար ապստամբ մի եմ ի կայսերէ, եւ համ թշնամի՞ք իմ, Հրեայք, ասացին քեզ զի-նէն՝ թէ եւ զանձն իմ մեծիական թագաւոր յայտարարած եմ, եւ սմին իրի իսկ խոտովեցուցիչ եւ պատժապարտ համարեալ եմ: Եթէ այսպէս եւ եթէ՛ այնպէս, յերկոսին իսկ դէպս եւ չե՛մ օրինազանց եւ ո՛չ պատմոյ արժանի:

Պիղատոս, թէպէտ եւ պարտէր ի հարկէ ընդունել զհնարաւորութիւն սոյնպիսի խարոյ, բայց սակայն բարձրայօն դայրացմամբ ասարկեց նոյնհետայն. «Միթէ ե ես Հրեայ իցեմ, ազն քո եւ քանանայապետք մասնեցին զքեզ ինձ. զի՞նչ գործ գործեալ է քո», այսինքն՝ զարմանալի՞ պատասխան. միթէ զի՞նս եւս Հրեայ կը կարծես. իմ հորցուած չէ՛ ըստ տեսակետի ձեր հրէական սնապաշտութեան, այլ իրրեւ Հրովմայեցի պաշտօնեայ եւ դատաւոր յատենի հարցանեմ զքեզ. ազգակիցքդ քո կ'ամբաստանեն զքեզ, թուի թէ՛ ո՛չ առանց պատճառաց. դատախազք քո ասին՝ թէ զու զքեզ ինքնին թագաւոր համբուած ես, օ՛ն, ուրեմն, ասա՛՛ զո՞ւ ես թագաւորն Հրէից:

Յիսուս. — «Ի՞մ արքայութիւն չէ՛ յայսրմ աշխարհէ . . . »: — Այսպիսի գերաշխարհային ինչ թագաւորութիւն անշուշտ անիմանալի եւ օտարտի իմն թուեցաւ Պիղատոսի. քանի՞նչ օտար եւ հեռի էր ի Պիղատոսէ զազափարն երկնաւոր՝ հոգեւոր իրիք թագաւորութեան, Աստուծոյ արքայութեան: Վասն որոյ ասէ

Պիղատոս. «Ապա թէ այդպէս իցէ, թագաւոր ոմն ես զու». — այսինքն՝ քանզի զու արքայութիւն մի ունիս — թէ եւ անիմաց է ինձ նորին որպիսութիւն — ուրեմն թագաւոր ոմն ես զու: —

Յայնժամ Յիսուս բացայայտապէս կը հաստատէ՝ «Իււ ասես թէ թագաւոր իցեմ», այսինքն՝ բարեք ասացեր, արդարեւ եւ թագաւոր եմ. այս բան ո՛չ եթէ ժխտուան, այլ մանաւանդ հաստատական է(*): — «Բայց» յարկց Յիսուս իրրեւ ըզ-

մեկնութիւն որպիսութեան եւ հանգամանաց իւրոյ թագաւորութեան, «եւ յայդ իսկ ձնեալ եմ, եւ ի զոյն իսկ եկեալ եմ յայտարհ, զի վկայեցից ձ՛ՆՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՆ, ամենայն որ ի ճշմարտութեանէ է՝ լսէ բարբառոյ իմոյ»: —

Բանգազուչոյ՝ խելացնոր, թէ եւ անշնաս, երգատես ոմն թուեցաւ Պիղատոսի իւր յանդիմանակացն: Ապա ուրեմն, կը խորհրդածէր նա, եւ սա՛՛ մին է ի մոլեմտ խանձ յիմարաց՝ որք յածին ի սնտաի ցնորս, վայրապար զհեա պնդելով դատնել զճըշմարտութիւն. որպիսի՞ ընդունայն ջանքանի՞ն՝ անօգուտ վատտակ. ողորմիլի՞ մարդ անմիտ, զո՞ւ եւս կը կարծես զիտակ զինել անդոյ ճշմարտութեան եւ կը համարձակիս վկայել իսկ այդց բանգազուչանաց: Կը յիշէր Պիղատոս՝ թէ էր երբեմն յորժամ ինքն եւս ի զո՛ւր կը հաստատար թէ զոյ բացարձակ իմն ճշմարտութիւն, յորժամ կը յաճախէր ի զպրոցս իմաստասիրաց, այլ սակայն ունկնդրութեամբ ուսմանց եւ պէսպէս փայլուն խորիմաց վարդապետութեանց փիլիսոփայից չէր յաջողած հասանել ի զիտութիւն ճշմարտութեան: Եւ հուսկ ուրեմն յուսահատեալ յանգած էր ի հաստատուն համոզումն՝ թէ անգլեա իմն է ճշմարտութիւնն, զի բնա՛ւ իսկ չի՛ք ճըշմարտութիւն (տ. ի վերադոյնսն): — Ապաքէն յա՛յսպիսի միտս իմանալի է Պիղատոսի խօսքն՝

«ՁԻՆՉ Է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ»:

Այս էր զողջեա իմն յայտարարութիւն հոգեւոր, բարոյական եւ իմաստասիրական սնանկութեան հեթանոսութեան:

Պիղատոս իւր կէս իմն ծագրարար՝ արհամարհոտ, եւ կէս իմն համակրական հարցման պատասխանեոյ մի չէր սպասեր, զի անդէն իսկ «զայս իրրեւ ասաց, գարձեալ ել առ Հրեայսն եւ ասէ ցնոսա, ես եւ ոչ մի ինչ պատճառս [= շնոսս, յանցանք] գտանեմ ի նմա»:

«Ձի՛նչ է ճշմարտութիւն». — որպիսի՞ նշանաւոր հարցուած հանդէպ «Իշխանի

(*) Հմտ. «զու ասես» Մթ 27. 11 և Մկ 15.

2. այսօրինակ էր բարունական բանաձեւն կամ սճն հաստատութեան. հմտ. ես՝ «զու ասացեր» Մթ 27, 6A և «զու ասացեր թէ ես եմ», կամ ըստ սմանց՝ «եւ եմ» Մկ 14, 62. նաև «զուք ասէք թէ ես եմ» Ղկ 22, 71:

աշխարհիս աշխարհի» (ՅՆ 16, 11), յորում
 «հասնեցաւ ամենայն լրումն Աստուածու-
 թեանն մարմնապէս բնակել» (Կդ 1, 19 և
 2, 9), և որ ասաց զանձնէ թէ՛ «ես եմ
 հանապարհն և ճշմարտութիւն և կեանք»
 (ՅՆ 14, 6)։— Ապա ուրեմն Քրիստոսնէա-
 կան Հաւատքն է միայն՝ որ կարող է կա-
 տարեկապէս յայտ առնել թէ զի՛նչ է ճշ-
 մարտութիւն։

Այլ արդ, և համառօտ իսկ ասել,
 ճշմարտութիւնն է կրօնական-խմտաստի-
 բական զիտութիւն կամ ծանօթութիւն
 սկզբանց, պատճառաց և էութեան համօ-
 բէն իրաց, մասնաւորապէս իմաստի և
 միախճանի կենաց մարդոյս։ Զայս ծանօ-
 թութիւն սմանք յուսան ստանալ մտա-
 խորհ գննութեամբ և հայեցողական՝ տե-
 սական վարդապետութեամբ, որպէս փի-
 լիստիայք հեթանոսաց, մինչ՝ ըստ քրիս-
 տոնէական հաւատոյ՝ Աստուածկէն յայտ-
 նութեամբ եւեթ հարարուր է հասու լինել
 նմին։ Թէպէտ և ճշմարտութիւնն, զէթ
 ըստ իմիք, այսինքն ծանաղողութիւնն նո-
 բին, յայտնեաց Աստուած ամենայն մարդ-
 կան (Հս 1, 18-25), և առանձինն Հիւս-
 կան ազգին (Հս 2, 17-24), այլ սակայն
 բովանդակ ճշմարտութիւնն միայն անձամբ
 Յիսուսի Քրիստոսի երեւեցաւ և յայտնի ե-
 գև աշխարհի (ՅՆ 1, 17 և այլուր)։—
 Այս է կատարեալ Աստուածածանօթութե-
 ամբ ստացեալ բնագանցական ճշմարտու-
 թիւնն, զոր վկայեաց Փրկիչն աշխարհի
 (ՅՆ 3, 11 և 32 և այլուր)։

Ուստի քրիստոնէական հաւատովք մի-
 այն մարթ է մեզ, ի ձեռն շնորհաց Ս. Հոգ-
 ւոյն, հասանել «ի զիտութիւն ճշմարտու-
 թեան որ ընդ Աստուածաբաշտութեանն է»
 (Տա 1, 1)։ Եւ մարդկեզէն իմաստաստի-
 բական վարդապետութիւնք և աշխարհա-
 յին ուսմունք և զիտութիւնք առ այդ չեն
 բաւական (2 Տմ 3, 7), զի սոքին առանց
 հոգևոր կրթութեան և վերին իմաստու-
 թեան ոչինչ օգտեն (2 Կր 2, 12. Տա 3,
 8. Կդ 1, 28. Եր 13, 9. Յկ 3, 13-18),
 և զի քրիստոնէական հաւատք ս՛չ են հաս-
 տատեալ իմաստութեամբ մարդկան, այլ
 արդեամբ Հոգւոյն և զօրութեամբ Աստու-
 ծոյ (1 Կր 2, 4-5)։ Մարդս մարդ լինի մի-
 այն կրօնական-բարոյական կրթութեամբ և
 դաստիարակութեամբ. զիտութիւնն առան-

ձինն ըստ ինքեան հպարտացուցանէ (1
 Կր 8, 1)։ «Զի ամենայն ասորք բարիք և
 ամենայն պարզեք կատարեալք ի վերուստ
 են իջեալ առ ի Հօբէն լուսոյ» (Յկ 1, 17)։
 Իսկ շնորհքն և ճշմարտութիւն ի ձեռն Յի-
 սուսի Քրիստոսի եղեն» (ՅՆ 1, 17), «յո-
 բում ամենայն զանձք իմաստութեան և
 զիտութեան ծածկեալ կան» (Կդ 2, 3)։
 Եւ Հոգին ճշմարտութեան է՝ որ ասաջնորդէ
 մեզ (ՅՆ 16, 13), և բանն ճշմարտութեան
 է աւետարանն փրկութեան մերոյ (Գդ. 2,
 5. Եփ 1, 13. Կդ 1, 5). զի օպտուզ
 Հոգւոյն ամենայն բարութեամբ է և ար-
 դարութեամբ և ճշմարտութեամբ» (Եփ
 5, 9. հմմտ. Եփ 4, 17 55. և 6, 13 55.)։

Վասն որոյ պարտ է մեզ կրթել զան-
 ձինս մեր յաստուածապաշտութիւն, որ զա-
 շտիս կենաց ունի զարդիս և զհանդեր-
 ձեցոյն (1. Տմ 4, 7-8), առ որ ուղեցոյց
 են մեզ Ս. Գրքք աստուածաշունչք՝ որ կա-
 րող են իմաստուն առնել զմեզ ի փրկու-
 թիւն, ի ձեռն հաւատոցն որ ի Քրիստոս
 Յիսուս (2 Տմ 3, 15-16), որով եւեթ մարթ-
 եմք ուսանել և իմանալ ուղիղ և լուսա-
 ւոր մտօք, առանց իրիք երկմտութեան,
 թէ՛ զի՛նչ է նշխարարիւն։

Յարպե, Ապրիլ 1929: Յ. Յ. Մ.

ՈՒՂՂԵԼԻԲ

- Ի նախընթաց նստածի Պարտրեանց.
 էջ 68 բ. ա. 5 ի վերուստ ընթ. 1 Կր 2,
 3-4.
 » 68 բ. ա. 16 ի վերուստ ընթ. որ սկիզբն
 » 69 ա. ա. 8 ի վերուստ » զկնի խո-
 նարնագոյն յաւելի է՝ (12, 28-30)
 » 69 բ. ա. 11 ի ներքուստ ընթ. ընդհե-
 շագոյն և
 » 70 ա. ա. 4 ի վեր. ընթ. զնրէշտկաց
 » 70 ա. ա. 13 ի վեր. ընթ. օգտն
 » 70 ա. ա. 11 ի ներք. ընթ. մարգարես-
 նայն
 » 70 բ. ա. 23 ի վեր. ընթ. նշխար
 » 71 ա. ա. 6 ի վեր. » յառաջ քան
 զբանն ընդ զնեի է ստորակէտ
 » 71 ա. ա. 13 ի վեր. ընթ. յեւացի
 » 71 բ. ա. 11 ի ներք. ընթ. բազում ի-
 մասունի
 » 71 բ. ա. 10 ի ներք. ընթ. ոչ բազում
 » 72 ա. ա. 16-17 ի վեր. ընթ. սկզբ-
 նամբ
 » 72 ա. ա. 1 ի ներք. զկնի ստուեր յա-
 շտի է՝ Յկ 1, 17
 » 72 բ. ա. 19 ի վեր. ընթ. նշխարիս
 » 72 բ. ա. 26 ի վեր. ընթ. նշխարիս

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՎԱՅՔ ՍԸ ԿԱՊՈՅՑ ԵՐԿԻՆՔԵՆ ՄԵՋ

Որդեակ, լոյիկըս բրանէ բունդ,
Ժիր՝ եռանդուն եղիր, աղէ՛,
Լուսցաւ արդէն, ու եկրագունցն
Ա՛րծաք ձայլի պէս աղօւս՛ր է:

Տենչանկէս ձե՛ռքս կը դողայ,
Հեսս եկուր մէջ հովին երազ,
Մէկտեղ չորս քեւ կ'ըլլանք, ա՛յ տղայ,
Խըմենք արեւը նորածագ:

Նմանի՛նք կրօնի զացողներուն՝
Բախտի համար ու հանոյթի,
Նրանեղաւ երկիրն համբուն,
Ի՛նչեկինն որ չի՛ բանուիր խկի:

Ի՛նչ փոյր՝ քէ երզմ դունչըդ դեղնի,
Ու իմ քայքայ ալ վարանին՝
Եթէ սիւքէն Սաղամինի
Գող առնեն մեր լաքերն ծըփին:

Ես Յաղարարունն ըլլա՛մ ներմակ,
Յայն բրակի մ' հովին դիմաց,
Կը ծռիմ հովէն մենք զժկամակ՝
Բայց կը քայնեն հետն համընթաց:

Իմ խրատնիս պի՛նդ փակիր դուն,
Չաւակս ես, եւ պէ՛տ է որ քու
Մագեց իբրեւ վին մ'ըզգայուն
Եւղեան երգ մ' հանեն աղու:

Իմ հոգույս մէջ կնացար, հա՛պա,
Թող էութի՛ւնըդ կարմրիկ
Սիւնայ, փղձիկ, ու քարանայ,
Արեւուն հետ կրօնէ սասիկ:

Պիտի ծեծէ տղն երեսդ ալ,
Առաջ անցիր սէգ ու ժրպսուն,
Պիտանին չէ՛ խելօք ըլլալ,
Այլ երթալ մօտ աստուածներուն:

Թ՛րգմ. Ե. Ե. Գ.

Ետուկ աման մ' իր վրայ ունի
Պարունի մը ու նիժ փաւուան,
Պիտի դրնենք յանկարծակի
Ա՛խարհի վրայ ոսկ մ' յաղրական:

Կը սանիմ կեզ չեմ գիտեր ո՛ւր,
Կը սանիմ ուր կան դիցազներ,
Լա՛յն՝ երգեցիկ՝ հիազարհուր
Մարդ մըն է այն, եւ գերիվէ՛ր:

Չեմալ բերնիդ սեղմէ համակ
Ինչ որ կ'աչրի ու կը շողայ,
Տիեզերն ինձի կը քուէր վայրագ,
Իր սարիտնին սակայն եղայ:

Հոգ չէ որ դուն աղածրի ես,
Մարդն հոժկու է դեռ չը ծընած,
Քաջարեանս հետ ծնած եմ ես,
Եղիր արծուիկ մը պարայած:

Իցի՛ւ կեանիս մէջ ես իսպառ
Տեսնէի քու հոգույդ, իմ հով,
Մրցիկն արբէ՛րս ու խանդալա՛ւ,
Բազկի՛ ծունկի խօլ քափերով:

Իմ մահուան օրս՝ պատմես պիտի
Անճնց որոնք կը հաւատան՝
Թէ՛ հրեցի մա՛ք դունն որ կ'սանի
Դաժան ու կրօն այն պիտարեան:

«Ես քողի գինի ծայրն ախարհին՝
Ուր բիլ ու չինչ միջոց մը կար,
Նէ՛ կ'երեւէր ախայժ՝ խորին,
Կ'ուզէր կապո՛յսը գգուել յար:

«Ասեմ չեղաւ որ ըսեմ ես,
Ի՛նչ կ'ընես դուն . . . Դէմքն էր շողէ,
Տեսայ յաժու՛մ իր գուարբերես,
Եւ ընկալգուի՛լն արեւուն մէջ»:

COMTESSE DE NOAILLES

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԳՈՂԳՈՔԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Գ.

Հտքէմի քանդամ սրբավայրերը երկար առնն մնացին նոյն վիճակի մէջ, մինչև որ հոտոսանդին Մանամատոս դահ բարձրացաւ և ան 1042ին պատեհութիւն գտաւ վերականգնելու զանոնք: Արքան որ երուսաղէմի քրիստոնէականները մեծ ուրախութիւն ունեցան այս վերանորոգութեանց համար, բայց դարձեալ տիրող կացութեան հետեւանքով կը մնային երկիւզի և սարսափի մէջ. քիչ մնաց որ 1070ին վերստին քանդուէր Գրիստոսի Կերեղմանը. բարեբախտաբար Արեւմուտք զգալի վասնոր և Մանամատոսի կասուցամ շէնքերը 15 Յուլիո 1099ին յաղթապանձ Սաշակիրնիւրու ուրախութեան արցունքները և յաղթանաչ կի նրդերը ընդունեցին:

Գրիստոսի Զարչարանայ և Յարութեան սրբավայրերը արամբարանօրէն երկու դասակարգ շէնքերու կը բամնուէին, Ս. Կերեղմանը և անոր յարամասերը. Գողգոթան և յարակից մասերը:

Մենք՝ ըստ մեր նիւթին նախ պիտի բացատրենք այս թուականին վերանորոգութեամբ Գողգոթայի եկեղեցին և յետոյ պիտի նկարագրենք հայկական յիշատակները նոյն եկեղեցիի վերաբերութեամբ: Գողգոթան միշտ ցոյց կը արուի Ս. Յարութեան եկեղեցիին արեւելքը, համաձայն միւսնոյն մերձաւոր հաստատումին՝ սր սրբավայրերու պատմութեան նախընթաց շրջաններուն մէջ յիշատակուած է: Ան Ս. Կերեղմանի մեծ եկեղեցիէն գուրս առանձին փոքրիկ շէնք մըն էր: Վերնայարի աղօթարանը, որ կը ծածկէր խաչկութեան ժայռը, զարդարուած էր գեղեցիկ մոզայիքներով որ կը ներկայացնէին Սաշակայ Գրիստոսը իր ծախը ունենալով իր մայրը և աջը՝ Ս. Յովհաննէսը: Մէկ կողմէն հարիւրապետը իր զեղարդովը կը ծակէ Յիսուսի կողը, մինչ ուրիշ կողմէն զինուոր մը եղէզի մը ծայրը անցուցած և քացտալով լեցուած սպունդը կը ներկայացնէ: Ժայռին գաղաթը բաց

թողուած էր, որպէսզի հրաշտի պատուածքները երեւնային: Ստորնայարի մասուոր մասամբ մը փորուած էր լիբան ժայռին մէջ և Արեւմուտքցիները կը կոչէին զայն Գողգոթայ, իսկ Արեւելքցիները նախամեծարութեամբ Տեղի Կոտափեղոյ (cranium) կը կոչէին զայն, որպէսզի վերնայարի եկեղեցիին վերապահէին Գողգոթա անունը:

Սաշակրաց պատմիչը Տիրոսի Արքեպիս., Կիլիսիոյ Տիրաքցի, հետեւեալ կերպով կը նկարագրէ Գողգոթայի մասին Սաշակիրներու կատարած փոփոխութիւնները. «Առտիններու զբաւումէն առաջ Գողգոթան, կենդանարար Սաշակրայի գիւտին տեղը, Պատանաեղին, հրէից սօվորութեան համաձայն Ս. Յարութեան եկեղեցիին շրջաբակէն գուրս կը մնային, բայց երբ մերինները (Սաշակիրք), ողորմութեամբ Աստուծոյ քաղաքը գրաւեցին զորսոր քաղիւս (in manu forti) նոյն շէնքը իրենց խիստ նեղ երեւեցաւ: Նախկին եկեղեցիին վրայ աւելցուցին հաստատուն և խիստ բարձր շինուածք մը, որ հին մասերը ամբողջով միւսնոյն շէնքին մէջ կը բովանդակէր խնդրոյնի թեղող տեղերը»: Պատմիչին այս խօսքերէն կը հասկնուի թէ ԺԱ. դարուն լատինները Բողբաշէնը գեղեցկացուցին, առանց էական փոփոխութեան, արեւելքէն անոր կցեցին ճոխապէս զարդարուն հոռմէական եկեղեցի մը, Գողգոթան, Պատանաեղին, Կիւտապի մուտքը և Ս. Պարտէզին արեւելքը գտնուող նոյն իսկ փոքր արդար յաղթարանները մէկ յարկի տակ ասին, կանգնեցին զանգակատուն մը. Սաշակրաց գործը մեծագոյն մասամբ այս կերպով կատարուեցաւ, այնպէս որ մինչև հիմա նոյնը մնացած է. թէև քիչ մը կերպարանափոխուած: Սաշակրաց ժամանակ ալիւս Գողգոթան ուրոյն շէնք մը չէր. այլ միացած էր իր յարակից մասերով Ս. Յարութեան տաճարին. ուղեկիրներու նրկարարութեանէն կը հասկցուի թէ Գողգոթայի մասուոր ունէր չորս կամարներ բայնչի սիւներու վրայ հաստատուած. կեղբունի սիւնը՝ առանցքը բոլոր կասուցուածքին, շէնքը կը բամնէր երկու որոշ մասերու: Գողգոթայի սիւներուն, պատերուն և կամարներուն զարդարանքները միշտ աչքի կը դարնէին, ինչպէս առաստաղին նոյնպէս յատակին վրայ գեղեցիկ նկար-

ներ ուխտաւորաց ուշադրութեան առարկայ եղած են :

1187ին երբ Սալակիրները սախաւեցան թողուլ Երուսաղէմը և Սալակատինի յաղթական բանակները գրաւեցին Ս. Երկիրը, Գողգոթայի եկեղեցին էր այն ինչ որ մենք կը տեսնենք այսօր, քիչ փոփոխութեամբ, որպէսզի կարենանք մէջ բերել Գողգոթայի եկեղեցիին հայկական յիշատակները հարկ կ'ըլլայ ճշգիւ նոյն եկեղեցիին սեփականութիւնը: Յայտնի կ'երևի թէ աւելի կանուխէն, ինչպէս արարական տիրապետութեան, նոյնպէս Սալակրաց ժամանակ տէրուական սրբափայլերը ընդհանուր քրիստոնէութեան պատկանող վայրեր էին, պաշտամունք և արարողութիւնք ամէն քրիստոնեայ ազգեր ընկերակցաբար կամ առանձնաբար կը կատարէին որոշ ժամանակներու մէջ, ինչպէս յայտնի կ'ըլլայ ճին դարերէ ժամանակուսած սաղիմական տոնացոյցներէ և ծիսարաններէ: Բայց պատմական ապացոյցներ մեզ կը փաստեն թէ Յրանցի իսլամ յաղթականին տիրապետութեան օրերէն տնօրինական ինչ ինչ սրբափայլեր մասնաւոր ազգերու սեփականութիւն կը գտնան, որպիսին է Գողգոթան որ հայ ազգին օրինական և դարաւոր մէկ հաստատութիւնն էր, ինչպէս ըստաբե պիտի կարողանանք պարզել: Նախկին դարերու մեր մատենագիրներէն Անաստաս Արղ., Մովսէս Կաղանկատացի, Սոկրատ Պատմաբան քաղաքագիր, ինչպէս նաև Դաշակոյ քաղաքի հեղինակը Գողգոթայի մասին ակնարկութիւններ ունին, բայց անոնց տողերը չեն կրնար բացարձակօրէն պատմական արժէք ներկայացնել, յայտնի ըլլալով անոնց կարգ մը տեղեկութիւններուն տարտամ և ժամանակավրէպ բնութիւնը, սակայն և այնպէս յիշեալ պատմիչներուն նոյն տողերը կարելի է նկատել վաղնջական աւանդութեան մը նուազիտ արձայանդները:

Ինչ որ ալ ըլլան ժ.Գ. և ժ.Ն. դարերու Գողգոթայի սեփականութեան մասին տիրող պետութեան ապօրէն և անիրաւ որոշումները, Գողգոթայի եկեղեցիին հայկական սեփականութիւնը պատմականօրէն հիմնաւոր է. ուստի մենք նախ այս հիմնաւորութիւնը պիտի հաստատենք և յետոյ պիտի ներկայացնենք նոյն զէպքերը

ու անցքերը որ հայ ազգը գրկեցին իր նոյն դարաւոր եկեղեցիէն և ի վերջոյ պիտի ներկայացրենք Երկրորդ Գողգոթայի հաստատութիւնը, իսկական Գողգոթայի գիմարը:

Առաջին ապացոյցը զոր մեզ կը հայթայթէ 1867ին, օտարական մըն է Ս. Երկրին Ֆրանսական նամակատան մէկ պաշտօնեան՝ Գարլօ Կիրամանի, որ իր Question sur la propriété du couvent de St. Jacques à Jérusalem տետրակին վերջին տողերուն մէջ կը յիշէ թէ Հայերը Սալակատինէն զնեցին Քրիստոսի Ս. Գերեզմանը համաձայն այն անկողմնակալ վկայութեան, զոր կը հայթայթեն մեզ Անշէնի արքայաբանի տարեգրքները: Անշէնի բնեկիտեան արքայաբանը հիմնուած է ժ.Ա. դարուն Սքարբի (Ֆրանսա) կղզիներէն միոյն մէջ. նոյն լուտիններէն յիշատակարանը կը զնենք նոս նոյնութեամբ. "Armeni christieni, magno dato censi pretio. Sepulchrum dominicum sua ecclesia et domini templum a salahadino redemerunt": Այս թանկագին յիշատակարանը կը յիշեն նաև մեր Երուսաղէմի պատմիչներէն Սաւալուն և Աստուածատուր Կոստանց յիշատակելու ազգիւրը: Նոյն յիշատակարանին ճշգրտութիւնը մեր խնդրանոց վրայ կատարած է Դոմինիկեան գիտնական հայերէն մին և յայտարարած է թէ այդ թանկագին յիշատակարանը իսկապէս մինչև այսօր գոյութիւն ունի Անշէնի արքայաբանին մէջ: Մենք վերե գրեցինք թէ Սալակիրները Ս. Յարութեան բուր սրբափայլերը մէկ յարկի տակ ամփոփեցին, այնպէս որ Տնօրինական տեղերու յարակից մասերը ամբողջութիւն մը կը կազմէին, կեդրոնը ըլլալով Քրիստոսի Ս. Գերեզմանը: Կատկած չկայ թէ Հայք Սալակատինէն ըստանալով Քրիստոսի Ս. Գերեզմանը, սեփականատէր կ'ըլլային տեղւոյն կառուցուածքներուն. բայց կ'երևի որ Հայերը քրիստոնէական եզրայրսիքութեամբ աուլուն Ս. Յարութեան տաճարին ամբողջութեան շուրջին տիրանալ, այլ միայն նախընտրեցին Գողգոթան իրենց պահել, թոյլ տալով միւսնոյն ժամանակ միւս քրիստոնէից իրենց ուխտը և արարողութիւնները կատարելու: Հայեր որոշապէս սեփականատէր դարձած են Գողգոթայի եկեղեցիին և երբե հարիւր տարիներ յետոյ նոյն սրբափայլը անիրաւաբար կը յափշտակուէ

ուրիշներէ: Երկար կ'ըլլայ հոս մէջըրիկ յիշատակարանները այն զրչագրողներուն որ Գողգոթայի հայ եկեղեցիին մէջ ընդօրինակութիւններ կատարած են. միայն հետաքրքրութեան համար ձեռագրաց յիշատակարաններէ քաղելով կը գնենք ցածն կը անոնց որ այդ կերպ աշխատանք ունեցած են հոն.

1⁹. Վարդան վրդ. Բարեղցի. 12 տարի կը մնայ Երուսաղէմ և Գողգոթայի համար կ'ընդօրինակէ ձաշտ զիտք մը, 1365ին. յիշեալը յետոյ կը դառնայ Կիլիկիա և եպս. կը ձեռնադրուի Կոստանդին կաթողիկոսէն:

2⁰. Յովնանկես Կոնստ. 1416ին Ս. Գողգոթայի եկեղեցիին մէջ Աւետարան մը կ'ընդօրինակէ Քաջբերունեաց Խառարաստի վանահայր Կարապետ վրդ.ի համար, որ ուխտի եկած էր նոյն միջոցին:

3⁰. Մկրտիչ արևղայ՝ լուսարար Ս. Յարութեան և Գողգոթայի, 1427ին ստացողը կ'ըլլայ Կարողիկեայ թղթաց մեկնութեան մէկ ձեռագրին:

4⁰. Ներսես Երեց՝ Երուսաղէմի Մեծարոյ և Արարհամ պատրիարքներու օրով (1445-1461) Երուսաղէմի մէջ կ'ընդօրինակէ Գանձարան մը (անթուական) և իր յիշատակարանին մէջ կը յիշատակէ Գողգոթայի եկեղեցին:

Այս և ուրիշ յիշատակարաններէն, ինչպէս նաև հրովարակներէն կը հասկցուի թէ Գողգոթայի եկեղեցին մինչև ժե. դարու կիսուն, թերևս քիչ մըն ալ աւելի կը մնար Հայոց Միաբանութեան սեփականութիւնը:

Վրացիք քրիստոնեայ ըլլալէ զբեթէ յիսուն տարի վերջ բազմութեամբ կուգան հաստատուի Ս. Երկրին մէջ, անոնցմէ մին Պետրոս Վրացին. կայսկոպոսանութե ասաջ, Երուսաղէմ եկած էր ու հաստատած էր վանքեր որոնցմէ մին Երուսաղէմի մէջ և միւսները Յորդանանու օփերուն վրայ կը զանուէին: Պրոկոպիոսի համաձայն, Յուստինիանոս ալ վրացիները շահելու համար կառուցած էր Խաշտվանքը որ բերդանման հաստատութիւն մըն է: Ժամանակի ընթացքին Ս. Քաղաքին մէջ ունեցան նաև ուրիշ վանքեր ալ և տեղական քրիստոնէից մէջ զբաւեցին ազգեցիկ զիրք մը: Արարական իշխանութեան և Խաշտկրաց ժամանակ թէ և նուազեցաւ անոնց թիւը, բայց Մէմլուքներու իշխանութեան օրով Երուսաղէմի վրացիները սկսած

էին վարուի տիրաբար, յայտնի ըլլալով նոյն կողմացի իշխանաւորներուն զբացնական սերտ կապակցութիւնը Վրացի ժողովրդեան հետ ու անոնց շահու և այլ նրութեան յարաբերութեանց վիճակը, ինչպէս նաև վրացական թաղաւորութեան զաշնակցութիւնը եկեղեցոսի Մէմլուք օրութեանութեան հետ, Վրացիք ժ.Գ. և ժ.Գ. դարերուն Ս. Երկրին մէջ ստացան առանձնաշնորհեալ կացութիւն մը և և Վրացիներ չափազանցօրէն բազմացան, վանական հաստատութիւնները աւելի ճոխացան, անոնց սեխտաւորները Երուսաղէմ կը մտնէին մեծանոցէս և զբողաներ պարզած, արք և և կանայք զինեալ վիճակով, և չէին լքարէր այն հողատուրքը զոր կը վճարէին ուրիշ ազգաց ուխտաւորները: 1240ին ժագալ Վիթրլի գրած տողերը խիստ նշանակալից են, Վրացիք տակաւ առ տակաւ Յունաց զիրքը կը գրուեն Ս. Քաղաքին մէջ: Վասնզի Մէմլուքները՝ ինչպէս Յոյները նմանապէս միւս քրիստոնեաները հանդիստ չէին թողուր: Իշխանութեամբ և զիրքով զօրացած Վրացիք՝ նախանձու ոգեով լըցուած՝ կ'ուզէին յափշտակել Գողգոթայի հայկական եկեղեցին պարզապէս շահագործելով Մէմլուք իշխանութեան իրենց նրկատմամբ ունեցած և վերև պարզուած կապակցութիւնները: Մեր Պատրիարքարանի արարելէն զիւանազիրներու պարունակութեանէն յայտնի կ'ըլլայ որ Վրացիք 1316ին խրատեցան յափշտակելու Գողգոթան. նոյնը կրկնեցին 1395ին. երկիցս կատարուած այս ապօրէն ձեռնարկին անհետեւանք մնաց Հայոց Միաբանութեան՝ Մէմլուք իշխանութեան մօտ կատարած ազգու զիմուսներուն հետեանքով, բայց Մեմլուքներու այդ շփացած զաշնակիցները առիթ կը փնտոէին իւրացնելու թէ՛ Ս. Յակոբի վանքը և թէ՛ Գողգոթայի Հայոց եկեղեցին, առաջնի մասին բոլորովին մերժուեցան. իսկ երկրորդի համար թէ և անիրաւ, բայց ամէն ապօրէն միջոցները գործագրեցին: Երուսաղէմացի Յովհաննէս Կար. ալ անուամբ Հեննէ, իր Երուսաղիսի Պատմութեան մէջ ամփոփ կերպով կը պատմէ այս զէպքը աննշով Յայտաւորի մը յիշատակարանէն և Ս. Յարութեան Վերնատան եկեղեցիին պատին վրայ ապուցուած արձանագրութենէն, որ իր ժամա-

նակ գոյութիւն ունէր. բայց այժմ ոչ: Հէն-
 նէի պատմութեան համաձայն հետեւեալ
 կերպով տեղի ունեցած է այս գէշաբք. 1439
 ին, Եգիպտացի Մարտիրոս պատրիարքին
 օրով, Եգիպտացի մեծ վաճառական մը Պա-
 յիպի անուն՝ վաճառականութեան համար
 Վրաստան կ'երթայ, ան շատ բարեկամ էր
 Եգիպտոսի սուլթանին, այս պարագան ի-
 մանաւորով Վրաց թագաւորը ամէն սպորէն
 միջոցներով կը սիրաշահի գանձիւս և միջ-
 նորդ կը բռնէ սուլթանին մօտ, որպէսզի
 Գողգոթան Հայերէն աւանու և տայ Վրա-
 ցիներուն. Ղայիպի վրացի ծառաներ և
 աղախիներ իրր ընծայ կը բերէ սուլթանին,
 հանգերձ բարձագանձ հարստութեամբ, որ
 մեծապէս կը զիրացնեն յափշտակութեան
 գործը ու այս կերպով միայն Վրացիք կը
 տիրանան Գողգոթայի: Մարտիրոս Եգիպ-
 տացի պատրիարքը կը զիմէ՝ սուլթանին
 որպէսզի ան ևս աւանու այդ հրամանը ու
 Գողգոթան վերադարձնէ Հայ Միաբանու-
 թեան. իր ջանքերը կը յաջողին և կրկին
 հրովարտակ կ'ստանայ, բայց զարձեալ
 Վրացի ոսկիներով կուրացած Ղայիպին կը
 թեքէ սուլթանին միտքը և կրկին վրացիք
 Գողգոթան կը յափշտակեն. ըստ պատմու-
 թեան, ծերունի պատրիարքը հինգ անգամ
 Եգիպտոս կը ճամբորդէ արգարութիւն
 դոնելու համար, բայց ոսկիներուն փայլը
 և ընչաքաղցութիւնը պաշտօնական անձե-
 րը կը հետացնէին արգարութենէ: Եւ Գող-
 գոթան կը յափշտակուի: Այս խնդրոյն
 նկատմամբ գոյութիւն ունեցող սուլթա-
 նական հրովարտակները ստուգապատուժ
 վիտներ են և ճշգրտոյն պատկերացումը
 կուտան նոյն ժամանակի վարչական և հան-
 բային կեանքին:

Անուգիդ ճանապարհով ստացուած
 յաղթանակները տնական չեն կրնար ըլլալ.
 Վրացիներուն կողմէն Գողգոթայի ստացման
 համար ձեռք բերուած մճապիրը Ս. Երկ-
 րին մէջ անսոց համար կը բանայ անկումի
 և բարոյական խեղճութեան թուական մը.
 1516ին Աէլիմի բանակները շատով յաղ-
 թահարեցին Մէլոյի քները և Վրացիք ալ
 երեսուզէմի մէջ քաղաքականապէս կո-
 բուսին իրենց ազդեցութիւնը, Վրացի կը-
 դերին և ժողովրդեան անկեալ վիճակը ազ-
 ցեց անոնց պատկանեալ հաստատութիւն-
 ներուն վրայ: Վրաստան զազրեցուց իր

նպաստները, ուխտաւորները պակսեցան և
 վանքերն մնացին մեծամեծ պարսքերու
 տակ, և չկրցին մատակարարել իրենց և
 կեղեցիները. 1642ին Վրացի վանականնե-
 րը Գողգոթայէն քաշուեցան ու յանձնելով
 զայն կրօնակից Յոյներուն, ժամանակ մը
 մնացին Խաչովանքին մէջ. հոն ալ չկրցին
 տեղաւորուիլ և 1655ին բոլորովին լքեցին
 երեսուզէմը, իրենց բերգամման հաստա-
 տութիւնները կամ ծախելով և կամ Յոյ-
 ներուն յանձնելով. և ահա անոնք Աերպե-
 բու և Թրակացիներու նման չկարողացան
 պաշտպանել իրենց կրօնական հաստատու-
 թիւնները. ազգային յոխորտանքին վախ-
 ճանն էր այս: Մարտիրոս պատրիարք կը
 հակառակ իր ջանքերուն և տաժանակիր
 ճամբորդութեանց չկրցաւ տիրանալ Գող-
 գոթային, Եգիպտոսի սուլթանէն ծախու
 կ'աւանու Ս. Յարութեան տաճարին մէջ
 գտնուած Թագաւորաց Աղօթանքի ըսուած
 վերնատունը որ սանդուղով մը կապուած
 էր վարի յարկերուն հետ. կեղեցիկի կը
 վերածէ և կ'անուանէ Երկրորդ Գողգոթա. նոյն
 վերնատունը, ունէր երեք կամար և երկու
 մեծ լուսամուտներ, որ կը նային Ս. Յա-
 բութեան դրան վրայ. Գողգոթայի փոխա-
 ըէն վերնատան եկեղեցին արքունի հրա-
 մանաւ և պետական որոշումով և վաւե-
 րաթուղթերով սեպհականութիւնը եզու-
 Հայոց միաբանութեան, որ մինչև այսօր
 իր յատուկ ստօրեայ պաշտօնունքներուն
 և հանգիստական արարողութեանց համար
 կը գործածէ զայն: Նոյն վերնատան եկե-
 ղեցիին մէջ նորոգութիւն ըրած է նախ
 Գրիգոր Պարոնակի պատրիարքը, որ լատին-
 ներէն երեք կամար և սա առած և փոխա-
 ըէն տուած է Պարսկ ըսուած տեղւոյն վրա-
 յի կանթեղն և այն խուցը որ կը գտնուէր
 լատիններուն երգեհոնին մօտ, և Պարոն-
 ակըր այս կերպով կ'ընդարձակէ նոյն եկե-
 ղեցին. ապա Յովհաննէս վրդ. Երեսու-
 ղէմացին (չետոյ եպոս.) օգնութեամբ կո-
 լտարին և Շղթայակիրին, որ տակաւին Պե-
 լիս կը գտնուէր, նոյն տեղւոյն մէջ Աւագ
 սեղանին զիմացը գտնուած և առաստա-
 ցէն մինչև յատակը խարսխած քարէ քա-
 սակոսի ահապին սրւնը՝ որ կը զոցէր սե-
 զանը, մեծ աշխատութիւններով մէջտե-
 ղէն վերցնելու տայ, կամարներով կ'ամ-
 բողջէ պատերը և աւելի ևս կ'ընդարձակէ
 կեղեցիին, միաբաններու և ժամարարներու
 համար ալ յատուկ սենեակներ աւելցնելով:

(ՎԵՐՁ) ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԻՆՈՒՆԻ

ԿՐԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՆԵՐԸ

ԺԲ.

ԱԶԱՐԻԱ ԶՈՒՂԱՅԵՑԻ

1581 Փետր. 5 Գ. — * 1601 Յիւն. 2.

Ն.

Ջուզայեցիին կաթողիկոսութիւնը վտարիկ ընդհանուր մը ունեցաւ և պահ մը վրդապետաւ իր հանդիսար Կրիկիոյ արժանին աչք տնկող երկու եպիսկոպոսներու յանդգնութեան հետեւանաբով:

Առնց առաջինն է Տիրատուր եպիսկոպոս Տիրիկի կամ Տիրիկիցի, որ Լէոնարդոյի վիճաբանութեամբ, ժամանակին դիտանական վարդապետներէն մէկն էր:

Տիրատուրի կաթողիկոսութիւնը Սոյ Մարտոյն մէջ յիշատակագրուած է այսպէս.

— «Նուաս Տիրատուր կրկու, նստա յարա խղճապետութեան Սոս. րվն. Ռ.Լ. (—1585) Մառ ամսոյ Կ. (—20) »:

Ազարիա ամսու բարձրացած էր 1584 փետր. 25ին, որքան Տիրատուր անկէ երկու տարի և մէկ ամիս ետքը կաթողիկոս եղած է առանձինն, զի առնան Սոյ ըստ Չամչեանի. իսկ անկից երկու տարի ետքն ալ (1588) Յովնանէս անուն եպիսկոպոս մը կաթողիկոս կը ձեւանայ, դարձեալ ըստ Չամչեանի (Պսմ. Հայոց, Գ. 528):

Տիրատուրի մասին Դարանապցիին և Չամչեան քանի մը կարեւոր տեղեկութիւններ տուած են, իսկ Յովնանէս յիշատակուած է միայն Չամչեանէն, և իր մասին այդ յիշատակութենէն աւելի տեղեկութիւն մը չունինք առ այժմ:

Դարանապցիի տեղեկութիւնը զուրկ է ժամանակագրական ճշդութենէ և խառնակ, որովհետեւ խառատուր Բ.ին անմիջապէս յաջորդած կը կարճէ Տիրատուրը, և կ'ըսէ.

—Տիրատուր անկողկոս եր և անարիւ և փառասեր, որ չբաւանացաւ Կրիկիոյ արժանութիւն ալ Կ. Պոլիս եկաւ և պատրիարքական աթոռն ալ զբաւեց և Սիս մնաց անտէրունչ, իսկ Սիսեցի վարդապետներ, եպիսկոպոսներ, քահանաներ, երեւելիներ (տաղաբաններ) ժամանակին Աւագ վարդապետը (—Ազարիա Ջուզայեցիին) արժանի տեսան և կաթողիկոս օրհնեցին, Տիրատուր շատ հակառակեցաւ Ազարիային եւ շատ այժմակ ու գժտութիւնն եղաւ և հասաւ մինչև Աերատփառ եւ ստանց խնդիրը հասաւ Հարապետ վարդապետին, որուն աշակերտն էր, կ'ըսէ Դարանապցիին, իմ վարժապետս Սրապիան վրդ., անկէ շնչի սոյ պատմութիւնը, վերջապէս, կ'ըսէ, քաղքին (Աերատփոյ)՝ քահանաներն ու տաղաբանները միջնորդեցին և զժողարաւ հաշտեցուցին զանոնք, և այդ տարին (1595) Տիրատուր յախճանեցաւ (Մննցի. Ժմնկիրքն. էջ 308-319):

Իսկ ըստ Չամչեանի Ազարիայի կաթողիկո-

սութեան երրորդ տարին Տիրատուր վրդապ., որ 25 տարի յառաջ (—1561) ինկած էր Կ. Պոլիս պատրիարքութենէն, առանձին կիճու, ձեռնադրուեցաւ Սիսի սահմաններուն մէջ, երկու տարի ետքն ալ (1588) Յովնանէս անուն մէկը ձեռնադրուեցաւ, և այսպէս Սիս ունեցաւ երեք կաթողիկոսներ, և այս պատճառաւ շատ խռովութիւններ եղան Պաղտատնի և եղիտասի Հայոց մէջն, շատ զբամ ծախսեցին, շատեր ազատացան ասոր համար. Յովնանէս մնաւ, իսկ Ազարիա Կ. Պոլիս դնաց, տարի մը պատրիարք եղաւ 1591ին և յետոյ վարդապետաւ Սիս, մերժեց Տիրատուրը, ինքն միայն կաթողիկոս մնաց, իսկ Տիրատուր Պոլիս գնաց և քանի մը տարի ետքը, 1600ին, կրկին պատրիարք եղաւ՝ երեք տարի ըստ (Պսմ. Հայոց էջ 528):

Տիրատուրի մասին ուրիշ յիշատակութիւն մը չունինք առ այժմ: Միայն Սիմէոն կիճու իր նշանաւոր թուղթին մէջ կը յիշէ Տիրատուրը, որ Անկիւրիոյ վրայ եղաւ, ձեռնադրած է Սարգիս մը, որ վերջը պատրիարք եղած է Կ. Պոլիս.—Տիրատուր, որ կարողիկոս անուանեցաւ (Անկիւրիոյ եպիսկոպոս) ձեռնադրեց զՍարգիս եպիսկոպոս Կ. Պոլսոյ պատրիարք (Արեւ. Մատուլ, 1890, էջ 519): Օրմանեանի միջոցաւ (Ազգայն. էջ 2260) հրատարակութեան այս ձեռն տարուելով, ես ալ այնպէս կարծած էի երբեմն որ Տիրատուր կիճու, նախապէս աստիճորդ եղած ըլլայ Անկիւրիոյ (1592-1596?), ըսոյ յետոյ անդրադարձայ որ ինտակ չէ սակեմ, փաստի Տիրատուր Անկիւրիոյ առաջնորդ չէ եղած, որ, ըստ Լէոնարդոյի, Տիրիկիցի է կամ առաջնորդ Տիրիկի՝ Ազարիայի կաթողիկոսութեան ընկիւրը, ոչ ալ Սեպի՝ ըստ Օրմանեանի (Ազգայն. նոյն անոյ): Հետեւաբար վերոյիշեալ տուելը, ըստ իս, պէտք է ուղղել այսպէս, վերցնելով փակագիծները.—Տիրատուր, որ կարողիկոս անուանեցաւ, Անկիւրիոյ եպիսկոպոս ձեռնադրեց զՍարգիս եպիսկոպոս՝ Կ. Պոլսոյ պատրիարք, այնպէս Տիրատուր, որ կաթողիկոս անուանեցաւ (օրհնաւոր կիճու, չեղաւ), Անկիւրիոյ վրայ եպիսկոպոս ձեռնադրեց այն Սարգիս եպիսկոպոսը, որ ետքը Կ. Պոլիս պատրիարք եղաւ (1592—1596):

Տիրատուր ուրեմն սպօրթին կիճու, մըն է, կամ Սիմէոն կիճուի անխարկութեամբ՝ կրկու անգամ առամ է միայն, 1586—1592, փեց տարի, և ըստ Դարանապցիի մնում է ՌեԳ.—1595ին, ինչ որ սխալ է. փաստի Տիրատուր ոչ չէ այն ատեն և երկրորդ անգամ պատրիարք եղած է Կ. Պոլիս 1596—1599, իսկ առաջին պատրիարքութեան թրււականն է 1561—1563:

Օրմանեան այնպէս կարծած է որ Ջուզայեցիին զիրքը խախտեցաւ իր և Լէոնարդոյի միջև գոյացած համաձայնութեան հետեւանաբով, և նետեւաբար մերժուեցաւ հանրութեան կողմէն, և Տիրատուր յաջորդեց իրեն (Ազգայն. էջ 2283): Մատուր միայն պատմական է այս կարծիքը: Լէոնարդոյ ալ կը վկայէ իր տեղեկագրին մէջ թէ Ազարիա Կ. Պոլիս գնաց իրեն հակառակորդ եպիսկոպոսի մը զէմ ինքզինք պաշտպանելու համար: Հաւանաբար Տիրատուրը եղած ըլլայ այս

եղիակոպոսը, հաւանաբար կ'ըսենք, որոշեալու Տիրատուր ծանօթ է Լէննաբաղային և կրնար յա-
կանէ յանուանէ յիշիլ զայն, ինչպէս որ յիշած է
ժամանակին գիտուն վարդապետներու շար-
քին: Ամէն պարագայի մէջ մեր պատմութեան
համար կարեւոր է գիտնալ թէ Տիրատուր պարզ
յափշտակիչ մըն է. ո՛չ Ասեցի է, ո՛չ ալ Սիսի
մէջ ձեռնադրուած է, այլ ըի սահմանս Սոյն:
Մագաբիա Գոյիը նոյն իսկ իր ցանկին մէջ չէ ա-
ռած Տիրատուրի և Յովհաննէսի անունները:

Հաւանական է ենթադրել որ Ազարիա կ' Պո-
լիս գնաց ո՛չ միայն լուսարանելու Կ. Պոլսի
պատրիարքարան Լէննաբաղայինն կատարուած
բանակցութեանց մասին, այլև հառաջադրութեան
ուժով տապալելու երկու ապօրէն կաթողիկոսնե-
րը, և այդ նպատակով ալ պատրիարք եղաւ
պահ մը 1591—92, որ աւելի մօտէն գործէ պատ-
րիարքական իշխանութեանը Ազարիա վերջա-
պէս կը յաջողի տապալել Տիրատուրը: Յովհան-
նէս, ըստ Չամչեանի, կանուխ մեռած պիտի ըլ-
լայ որ այլևս չի խօսուիր իր մասին:

Շատ պարմանալի է որ Ջուղայեցիին յաջոր-
դը, Յովհաննէս Անթիկոյցին, որ մօտէն գիտէր
Տիրատուրի և Յովհաննէսի յափշտակութիւննե-
րը, չի խօսիր այս միջադէպներու վրայ: Գորա-
նազցին կը խօսի Տիրատուրի մասին, ինչպէս
տեսանք, բայց կը լռէ Յովհաննէսի մասին: Չամ-
չեան չի նշանակիր իր հակերձ տեղեկութեան
ազրիւրը: Իսկ մենք կը բաւականանանք արձա-
նագրելով առ այժմ ինչ որ հասած է մեր ձեռքը:

2.

Յովհ. Անթիկոյցին սապէս կը պատմէ Ազա-
րիայի մահը. — Մենք, Կ' ըսէ, երեսուղէմէն վե-
րայարձանք Հայէպէ, և Ս. Յակոբի պարտերուն
հաշիւները ներկայացուցինք իրեն: Այդ միջոցին
սաստիկ մահտարածամ մը կար, յանկարծ հի-
ւանդացաւ Ազարիա, հինգ օր պառկեցաւ և ա-
ւանդեց իր հողին: Խաւար պատեց Հայոց Տուներ,
օրովետեալ զրիւսեցանք այսպիսի պայծառ արեւ-
է մը: Ես Յովհաննէս վարդապետս, որբացայ
կործանելով Բաղրասեղի (գեղազէմ) հայրս և շատ
պարով զրի վինքն իր հանգստեան տեղը, որուն
կենդանի աջօթքը և օրհնութիւնը միշտ մեր վը-
րայ ըլլայ, և Տէր Քրիստոս անոր հողին զատա-
կեց ընէ երկոտասան սուրբ առաքեալներուն.
ամէն:

Դուսււտը հողին մեռաւ ՌԻՄ=1601ին: Յիսուն
տարեկան էր կըր նստաւ արժող, և տասնրեօթը
տարի կաթողիկոսութիւն ըրաւ: Հինգ ամիս ետ-
քը ես ալ եղայ Հայէպէն և Ասանա եկայ՝ միս-
թարեւու համար Կիլիկիոյ իշխաններն ու արժո-
ւակայ քահանաները, հային, և կը նկարագրէ
թէ ի՛նչպէս կաթողիկոս եղաւ ինքն, զոր պիտի
տեսնենք իր կարգին:

Ազարիա թաղուեցաւ Հայէպի Ս. Քառասունը
եկեղեցոյ մէջ, այսինքն արդի եկեղեցոյ Աւագ
սեղանին կից (արեւմտեան կողմէն) մատրան
մէջ (*): Տապանաբար դեռեղուած է սեղանին
առջև, հազիւ կանգնաչափ բարձր բովն երեսը:
Իսկ տապանագիրն է այս.

«Յու վառն անչափ Բոյն | Բանդ ի կո
ւակն աւեր մարմին. աղաչամով Աճամ |
կին, քոյ բջականս Տէր Ազարայ |
կարդիկութն, որ ես հանգստ ի մեծ բժին |
ՌԻՄ. աւելուցին | յաժամ զայցեա աւխարն կրկին |
յառայ զաս փառով Բոյն. զիս գնալով, ... պղեա,
ժողովու Բոյն ամէն: | »

Տապանագիրը շատ դէշ քանդակուած է և
քերականական գործրիկ սխալներ ունի. իսկ վեր-
ջին տողերը դժուար կը կարգացուին:

Այս տապանագիրը առաջին անգամ հրա-
տարակուած է Սիոն անապարին մէջ (Գ. Տարի,
1868 սեպտեմբեր, էջ 104), և հրատարակողը վեր-
ջին տողը կարգացեր է այսպէս.

—զիս գնեղով սրկի սարին որ ես
պղեա ժողովու Բոյն, ամէն:

Գիտել տուինք արդէն որ Օրմանեան Ազա-
րիա կիցար. սխառացած կարծիքով ճշանակալից
գրած էր ստոր տապանագրին սա տողը.

—Թող գլանցան Ազարիա կրկին.

իրբև ակնարկ առաջին անգամ տկարանալուէն:

Մինչ իրողութիւնը սա՛ է որ այդ տապանա-
գիրը պարզ մէկ ընդօրինակութիւնն է Կիլիկեան
հնագոյն տապանագրի մը, որ իրբև օրինակ ծա-
ռայած է ուրիշներուն ալ. միայն հանդուգեացի
անունը փոխելով. հետևաբար բոլորովին անհիմն
է կարծիլ թէ Ազարիայի յանցանքին ակնարկու-
թիւնն մը եղած ըլլայ այդ տողը:

Կիլիկեան տապանագրին իսկականը սա է.

—Յու վառն անչափ սիրոյ Բոյն
Բանդ ի կուտ աւեր մարմին.
Աղաչամով Ասուածունին
Խող գլանցանքս զԱԼԵՔՍԻՆ,
Որ ես հանգեալ ի մեծ բուլն,
Ետքն հարիւր Վարսուն Իրնկին.
Յարմա՛ զայցեա յախարն կրկին,
Յաւո՛ ըզաս փառով Բոյն. ամէն:

Այս տապանագիրը, որ հրատարակուած է
Մատեայ Աղանիին մէջ (Ս. Տարի, 1855, Մայիս,
էջ 115: Հմտ. Վ. Լանկուայի La Cilicie, էջ 320-
21), կա՛յ նաև Սիսուանի մէջ (էջ 272), սա տար-
բերութեանը միայն որ զԱԼԵՔՍԻՆԻ տեղ զԱԼԻՍԻՆ
է հուն, իսկ թուականն ալ գիրով, 24 (700+551=
1316)(*):

Նոյն տապանագիրն օրինակ ծառայած է,
բայց շատ անհարկօրէն, նաև Մօրսիսոս վա-
րդապետին, ըստ Ս. Յակոբի Մատեայարանին թիւ
3 | 256:8 2ևս. Աստուածաշունչին, Դատարաց
գիրքին նախագրութեան և զուխներուն վերջը,
սա՛՛ փոխառութեամբ.

—«Թող զանցանն զՄօրսիսոս բարունի
վարդապետին,
Եւ զՌԱԿԻ զձողին.
ԹՎԻՆ. Ռ. Խ. Ե. ԻՆՑ. (=1396).

Ազարիա Ջուղայեցի Կիլիկիոյ կաթողիկոսնե-
րուն մէջ հոյանալով դէմը մըն է, իրբև ուսեալ
վարդապետ և բա՛ջ հայրապետ, ճիւղն և տակուն:
առի կրօնական և ազգային բարձր զգացումնե-
րով, գործունեայ հոգեւորական մը իր պաշտօ-
նին բոլոր կողմերուն մէջ, բոլորանուէր իր ազ-
գին և եկեղեցւոյն շահերուն, և արգիւնաւոր իր
ձառնալուծութիւններուն մէջ:

Բ. Ե.

(*) Ազարիայի վախճանման տեղը, կարծիքով կամ
սխալմամբ նշանակուած է Սիս (Տէ՛ս Ընկարձակ Օ-
րացոյց Կ. Պոլսի Ազգ. Հիւանդանոցին, 1904, էջ 102):

(*) Ազարիայի եւ իր սաղանագրի մասին գրած
եմ նաև ՏԱՐԵՒԻ Տարեկոյցին մէջ (Գ. Տարի, 1928,
էջ 90—96):

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՎՍԱՅ "ՀԱՐՄՈՆԱՅ", Ն

Ե Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ի միջի բանասիրական քաղաածներին (ՏԵՍ ԱՒՆ, թիւ 1, Յունուար, 1929, էջ 25) կարգում ենք. «Յօդուածագիրը Neubauerի Աշխարհագրագիտական Տարեգրքի գործին (էջ 311) յղելով ընթերցողը՝ մտադիր կ'ընէ մեկնելներէն ոմանց կարծիքին՝ թէ Ամովսի (Դ. 3) յիշած Հարմընը Հայաստանն է: [Յայն էւ Հայ Բարբառագիրքի մէջ անհայտ յարմընը անհայտ է:]»

Նախ և յառաջ՝ նշմարելի է որ բուն երբայերէնին մէջ յիշուածն Հարմըն է որ, ստուգարանօրէն, նշանակում է որ կամ է լեռնին Մեծայի կամ Միջին: Երկրորդ՝ հայ թարգմանութեան մէջ այդ անունն պարզապէս արձանագրուած է որպէս Ռեմանայ (սեւ անկանիցիք ի լեռնին Ռեմանայ): Ամովս, Դ. 3, և յունարէնի մէջ որպէս Դեման: Եւ թէ ո՛ւր էր այդ տարագրութեան տեղին, ինքնին Ամովս վաւերացնում է հետագայիւ բացատրութեամբն, և ըստ իմաստին՝ ակնարկութեամբ առ Ստորին Հայաստան, «Եւ փոխեցից զձեզ անդր քուն զԴամասկոս, ստէ Տէր» (Ամով, Ե. 27), ուր Միջինի լեռնին էին:

Հին կտակարանի ընթերցողք գրեանքն որ Ամովսայ այս մարգարէութիւնն յղափայցեալ ևս վատահամբաւ Սամարացոց մասին էր, որոց անգթութեանց և անառակութեանց որպէս զրդիւք՝ կանանց սեռին, կծու անուանարկութեամբ, կոչում է Նիշնիւթ Բանան (Դ. 1.): Եւ այս մարգարէութիւնն կտարեցաւ երբ Սաղմնաստար Դ. յամին Ն. Ք. 724, արչաւեցաւ Սամարիոյ վերայ երեքամեայ պաշարմամբ (ՏԵՍ, Դ. Թագ. ԺԷ. 3, և ԺԸ. 9) և նորա յաջորդ, Սարգոն Բ. (Ն. Ք. 722-705), վերջիվերջոյ տրեց քաղաքին, յամին 721, և վերապրողացն աքսորեց առ հիւսիս, «առ լեռամբքն Մարաց» (Դ. Թագ. ԺԸ. 11), որով և վերջ կզե թագաւորութեանն Իսրայէլի:

Յաւօք գրեանք ի նշագէս մեր ժամա-

նակներում անգութ բռնաւորք հարկւր հազարներով խոչտանցանօք քչեցին մեր ազգին առ Միջագետաց մահաշունչ և արեակէզ սանձաններն, որպէսզի անդ ոչնչանային անսովոր կլիմային ազդեցութեան ներքոյ: Նոյնպէս և ի հնուն՝ Ասորեստանեայց թագաւորներն, երբ գրաւում էին քաղաքներ, յԱսորիս և ի Պաղեստին, վերապրողացն տարագրում էին ի լեռնապատ հիւսիսակողմանն, ցրտի ազդեցութեամբն վրտանդաւորելոյ նոցա կեանքն: Զոր օրինակ, «Եւ էլ արքայն Ասորեստանեայց ի Գամասկոս և էառ զնա, և վարեաց զնա ի գերութիւն ի հիւրէն» (Դ. Թագ. ԺԶ. 9): Արդ՝ այս տարագրութեան տեղին «հիւրէն», բուն երբայերէնին մէջ յիշուած է որպէս «հիր», և այս ալ ոչինչ է քան թէ մեր կարգեան որ հնագոյն դասական քարտէզներում կրեում է Cyrus անուամբ՝ ևս զոր մեր թարգմանիւք վերածեցին որպէս «հիւրէն»: Միւս մի օրինակ. Նիւուէի մօտ, Բաւիանի ժայռապակերտին մէջ արձանագրուած է թէ երբ Սենեքերիմ արքայն գրաւեց Բաբելոն (Ն. Ք. 704), բռնակիչներին քչեց առ Արախի, զոր հնագէտք համարում են մեր Նրախ գետն (Araxes):

Արդ՝ յայտնի է բազմաց որ բուն երբայերէն կտակարանին մէջ՝ անբացատրապէս Արախ բառն է յիշատակուած անգրագարձութեամբ մեր վերին Հայաստանին, զոր Ասորեստանեայց կոչում էին Ուրարու: Դալով առ Սորէն Հայաստան և մասնաւորապէս առ այն մասն որ անկտնում էր ի մէջ Վանայ և Ուրմիոյ լճին և որ տեղւոյ Հայերն, ժամանակակից ընդ Ամովսայ Վանայ թագաւորի (Միւնուս Ա. Ն. Ք. 800-780) մէկ արձանագրութեան համեմատ, կոչում էին Արէն (ՏԵՍ, Հայր Սահակ Տէր Մովսէսի Պատմագիրքն Հայոց, Հատ. Ա. էջ 124), Ասորեստանեայց, ըստ իւրեանց բեւեռագրութեանց, անուանում էին «Մաննայի», որոյ քաջ ծանօթ էին Երբայեցիք իբրև Մեծայ և Միջին: Սորա առ ազգացոյց, Երեմիա (Ն. Ք. 629-580), մարգարէանալով Բաբելոնի անկման մասին, ըստ բուն Երբայերէնին՝ այսպէս է ասում (տե՛ս, զոր օրինակ, Անգլիերէն թարգմանութիւնն, Ger. Ll. 27): «Call together against her the kingdoms of Ararat, Minni and Ashkenaz», նը-



շանակելով Վերին և Ստորին Հայաստանի հայ Ազգին և Փոխգաղտնոց: Այս մասն մեր թարգմանիչք վերածեցին այսպէս. «Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանցն և Աքրանդեան գնդին» (Երմ. ԾԱ. 27), այսինքն, իմացականօրէն՝ յապաւելով ՄԷՆԷ, ըստ որում յոգնակի իմաստիւ «Արարատեան թագաւորութեանց» արտայայտութիւնն, համարովանդակիչ էր Հայաստանի աւելցութեամբ: Եւ այս մարդարեւութիւնն կատարեցաւ յամին Ն. Բ. 538, երբ կիրարտ տրեկե Բարեւոն քաղաքին ունկելով որպէս իւր զինակից և զօրագլուխ մեր Արարատեան աշխարհի թագաւոր՝ Երուանդ Առաջնոյն թագաժառանգ որդին Տիգրան և կարեոր Հայկական զօրութեամբ մի յաղթական պատերազմին մէջ:

Անտարակոյս՝ ինքնին երեմիա չբատեղձագործեց այդ «Միննի» բառն, այլ գիտակից էր այդ մասին իւր նախորդներէն, որոյ նախատիպն մեք տեսնում ենք նոյն իսկ Հարձնայ անուանակոչութեան մէջ, արձանագրութեամբ, յոսաջ քան զՔրիստոսութեան զարու սկիզբներումն, նախազոյն քան զամենայն մարդարէ՛ Ամփսայ ձեռամբ, որպէս իւր ազգին մէջ արգէն քաջածանօթ աշխարհագրական մէկ անուն և, ըստ մեր հետազոտութեանց՝ չենք երկուանում ասել համոզօր ընդ Արձնէա բառին: Առ ապացոյց սորա յիշենք աստանօր հեռակալ հեղինակաւոր վկայութիւնն (տե՛ս, Hebrew and English Lexicon of the Old Testament) ի մասին Երբայերէն Հարձն բառին: — «Կասկածանք կան այս բառի մասին. թերեւ զեղծումն լինի բնագրին մէջ (ԱճՎ, Գ. 3): Արամէական Հին Կտակարանի (Targum) և Ստորական Կտակարանի (Peshito) թարգմանութիւնքն ունին Mountain(s) of Armenia: Սիմաքոս (Սարգսէ, որ Քրիստոսական երկրորդ զարու վերջերումն վերբատին թարգմանեց Կտակարանն՝ ի Յոյն լեզու) ունի Armenia»:

Լոնդոն Ս. ՏէՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՏԵՆԱԻՍՍԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՄԱԲԱՆ Թ. ԴԱՐ

Գիրքը.— Կը բազկանայ հարիւր օթսուն և եօթը գլուխներէ: Առաջին գլուխը տեսակ մը ծրագիր է ուր գործին մեծ գիծերը կուտայու առաջին մասին մէջ արագ ընթանալը կը պատմէ: Յետոյ կ'անցնի բուն նիւթին:— Այսինքն աշխարհածնութիւն մը (cosmogonie) կը յօրինէ հեռակալ Սորենացիին: Բոլոր ազգերը կը ծնին, ինչպէս Հայը: Ու Սորենացիէն համառօտութեամբ կուտայ հայկազնեան աւանդական հարօտութիւնը, յետոյ Արշակունեաց հարօտութիւնը, մարզպանները և ոստիկանները: Մինչև իր ահանատեօի վկայութիւնները գիրքը զուրկ է շահեկանութիւնէ:— Բայց Բագրատունեաց հարօտութեան իր պատմածները, մանաւանդ իր կաթողիսոսացութիւն ետքը իր տեսածները և քաջածները, Սմբատ, Աշոտ, Գագիկ (Բագրատունի և Արժրունի թագաւորներ) Յուսուփ, Բուխա, Ափշին, Նար, Բշր ոստիկանները: Յետոյ ինչպէս Աշոտին մօտ (Շահնշահ) պատուատիրութիւնը:

Ինչպէս կը տեսնուի այս արագ թըլուտմէն, զրքին մեծագոյն մասը կը գրուեն իր անձնապէս տեսած ու ապրած զբրուագները: Վերջարանին մէջ ողբ մը կայ, նման Սորենացիի գրածին:

Նխորդ.— Կարելի է աննկատ թողուլ մինչև հեղինակին անձնական միջամտութիւնը, զիրքին պարունակութիւնը որ անուններու հեռակալ թուում մըն է: Բայց Բագրատունեաց հարօտութեան հեռ անոր նիւթը կը մտնուարուի: Ու աստիկա յաւիտենական նիւթն է հայ պատմութեան:

Ա. Արշադուկեր: Յովհաննէս կաթողիկոսի զրքին մէջ առաջին աստիճանի կուգայ «Իմացեղան», «Կապարացի» տարրը, մանաւանդ իր ոստիկաններով ու ասպատակներով: Ոչ մէկ զիժ սակայն այդ մարդերուն անձնականութիւնէն: Անոնք տրուած են նոյն նախատական մակդիրներով: Ամէնն ալ «արիւնարբու գազաններ» են:

կը պատին երկրին մէջ, զաշտաբնակները խողխողելով, ամբայածնները պաշարել աշխատելով: Դասական հորդաներ են անք: Անոնց զործկակերպը զիրենք ի վերջոյ զաստարգումի կը մտնայնէ: Ու կարելի է ոստիկաններուն քսութենէն հանել արար տիրապետութեան նկարագրը որ կը հետագնդէ մանաւանդ արքունիքներ և նախարարները: Յետոյ կղերականները: Չենք զարմանար, մենք որ անսանք մեր պատմութեան վերջին գէպքերը, երբ թշնամին իրեն առաջնորդ կ'ունենայ միշտ քանի մը նախարարներ, Չենք զարմանար որ միւսները իրարու միտքը պրքտեն, բայց ոստիկանին սարսափէն լեռնէլեռ փախչին:

Բ. Թագաւորներ: Նոյն պահուն երեք թագաւորներ իրարու դէմ լարուած խամաճիկներու նման: Անոնք զիրենք պրեսակոյններուն հաշուոյն հարկ հաւաքելէ զատ զործ չուներ կործես: Յետոյ տեսանելի կ'ըլլան երբ իրարու դաւելու վրայ է հարցը: Անքաւր տարօրինակ տպաւորութիւնը կ'ընէ հալածական մարդու մը, որ զժբախտ թագը լեռնէ լեռ կը կը փախցնէ ու ոստիկաններէն կը փնտռուի, չուներուն անջեկն ինքզինքը ազատել ջանացող եղնիկի մը պէս: Նախարարները դէմ են անոր: Ու կը կրկնէ իր ցեղին պսակաւորներուն ճակատագիրը, այնքան ուրիշներու նման, երթալով կամովին ոստիկանին ցանցը: Հոն կը նահատակուի: Միւսները նոյն վիճակը կը ներկայացնեն: Դուին նստող ոստիկանին ձեռքը զործիքներ են, որոնք բան մը կ'արժեն երբ իրար մաշելու կը ծառայեն: Միւս, նախորդ զարերու թագաւորները տեսակ մը շնորհ, զժբախտ վեհափառութիւն կը ցուցնեն պատմիչներուն մէջ: Անոնք եղերական հալածականներ են միայն, ու տարօրինակ հեղութեամբ մը՝ զարդերու մէջ խեղզուած նանդէս կուզան երբ թափօրի մը, կամ դէպի Պաղատա աստքումի մը համար հրապարակ կը հանեն իրենց արքունի հանդերձանքը: Անոնց բարոյական պատկերը կսկիծալի է նոյնքան որքան քաղաքական ճակատագիրը: Միջնադարու իշխաններուն բոյոր մեղքերը, մուրաւանդութիւնը, քսութիւնը, նախանձը, սողոսկումը, եղբայրասպան վայրագութիւնը կը տեսնենք անոնց վրան: Պատմիչը

անոնց անհատական կեանքովը չէ զբաղած, բայց կը զուշակենք տտիկա երբ այդ իշխանները երկրին շահերուն հետ դէմ դէմի կ'ունենանք:

Գ. Նախարարներ: Արդէն մեծ մասը այդ տուներուն, որոնք իրենց անունները տուած էին Արշակունեաց հարստութեան ու աւելի հտքը մարդպաններու շրջանին, չեն երևար պատմարանին մէջ: Կարևորագոյնները — Բագրատունիները, Արծրունիները, մէյմէկ խորխուր թագ ձեռք անցուցած են ս'վ զիտէ ինչ անխոստովանելի զիններով: Այլապ ու անտղապ որակումները աւելի յաճախ կը պատահին քան թէ նախարար: Ու անոնք երբեմն խելացի, բնազդական շարժումներ կ'ընեն: Անոնք հաւատարապէս կը վախճան կեդրոնական կառավարութիւնէն, որ Դուինէն կ'աշխատի ամէն գնով զիրենք սիրաշահել, պաշտօնական կրօնքին զարմենել կամ հակառակ պարագային՝ նահատակել: Պատմարանը զեղեցիկ էջի մը մէջ պատմած է նախիջեանի աղէտը: Արարական այս քաղաքականութիւնը՝ երկրին անգանին կրօնակից ունենալու, ամենէն քայքայող ազդեցութիւնը ունեցած է մեր բախտին վրայ: Նախարարները իրենց հաշիւներուն մէջ նախադասած են անձնական շահը և հանգստութիւնը և կարգաւ ուրացած են իրենց կրօնքը: Այնպէս որ քանի մը հարիւր տարուան շրջանին մէջ արդէն իշխանական տոհմ մը հեռացած է իր ազգային ողբէն և կ'ապրի մանրանկար ոստիկաններու նման, ունենալով իր ժողովուրդը որ այլևս օտար է իրեն, քանի որ կրօնական տարբերութիւնը տակաւ վանած է զանոնք իրարմէ:

Դ. Կրօնականներ. — Կաթողիկոսի մը զործին մէջ սպասելի է որ կղերականները լայն բաժիններ զբաւեն: Դժբախտաբար անոնք չունին պայծառ դիմադրութիւն: Ամէնն ալ նահատակութեան յարմարութիւններ ցոյց կուտան ու մեռնելու ատեն միայն զեղեցիկ զիտեն ըլլալ: Դրքին մէջ կը տիրապետէ ամէնէն ասօջ ինքը որ աթոռ կը բարձրբանայ համեստ բառերով, կ'ափայտի երթալ ոստիկանին (Յուսուփ) և կը բանտարկուի շղթայակապ: Կ'ազատի կը փախչի Վրաստան, կը թղթակցի Պոլսոյ հետ (զիտելի է որ զիրքին առաջին մասին մէջ անիկա բուռն հակաքաղկեդոնա-

կան է: Երկրորդ մասին մէջ ունի իր կա-
 յուն (arrêté) քաղաքականութիւնը: որ կը
 պահանջէ Պոլսոյ պաշտպանութիւնը Հայոց
 վրայ) կը դառնայ յունական Հայաստան,
 Հասաւորչի աղբիւրը և Մանեայ քարայրը
 կը տեսնէ: Կ'անցնի կրկին արեւելք, կը
 միջնորդէ երկու Աշոտներու միջև: Կը հա-
 լածուի Նոր ստտիկանէն: Այս ամբողջ իրա-
 դարձութեանց մէջ անիկա գործնական ու
 վարչական յատկութիւններ կը ցուցադրէ:
 Բայց իր բարոյական հեղինակութիւնը կաս-
 կածելի է: Զինքը մտիկ չեն ըներ ու կը
 խարնեն: Ու տարտամ է դիմապնտութիւնը իր
 ընդհանուր գործին, որ առանկ խոռոպոյզ
 շրջաններու շրջաններու համար շատ զիւր
 չերեար: Միւսները, կաթողիկոսներ ամէնն
 ալ, վերջուած են լուսապսակի: Յուզիչ է
 Զորափորեցին, Մահակ կաթողիկոսը, որ
 իր մահովն անգամ օգտակար է իր ժողո-
 վուրդին: Նոյնքան առնական է Մաշտոցը
 որ դէմ կը դնէ նախարարներուն սպառ-
 նալիքին և կաթողիկոսացման խստաբանե-
 րուն և գանոնք յարգանքի կը պարտա-
 դրէ եկեղեցիի գերագոյն պետին հանդէպ:
 Գարձեալ գեղեցիկ է դէմքը Գէորգ կաթո-
 ղիկոսին: Մեծերէն վերջը սրտառուչ են
 պարզերը, կրօնաւորներ ու ճգնողներ, ո-
 րոնք ոչխարի պէս մաքուր, կը մորթուին
 «ԿԱՍՏՈՒԱԾ ՓՈՌՈՒՐԱՆԻՍՏՈՒՄ» ալ զ ցանկա-
 լի մահը իրենց պարգևած ըլլալուն:

Կղերը աղղեցութեան տէր չերեար
 պատմարանին զբքին մէջ: Պատճառները
 կրկին են. 1. Թագաւորներու և նախա-
 րարներու հակամարտութիւնը. 2. Արա-
 բական քաղաքականութիւնը:

Ե. Ժողովուրդը: Գիրքէն որոշապէս կա-
 րելի չէ հանել մեր ժողովուրդին պատկե-
 րը: Անիկա պատրաստ նութն է զանգ-
 ուածային ջարդերու: Գերեվարութիւն և
 խմբական դաւանախոսութեան համար
 ծայրագոյն շարժարանք. սովի և աղէտ-
 ներու տառն անոր մեծ առապանքը թե-
 րևս կը նշմարուին աւելի քան կը տես-
 նուին: Անիկա չի կայ պատերազմիու և
 ապրելու համար իր հողին վրայ, կիէ նը-
 կատի չառնենք այն պարբերական գող-
 թիւրը որոնք անխուսափելի են եղած դա-
 րերով այս ժողովուրդին համար: Երկրա-
 մասի մը բնակիչները կամօրին իրենց բոլոր
 աղխերովը կ'ապաստանին անմատոյց բար-

ձուքներ, լքելով աւերելով իրենց տըն-
 տեսութիւնը, մինչև որ թշնամիին հեղեղը
 ետ կը դառնայ: Ու կայ անիկա նորէն երբ
 պիտի մորթուի իր հայրերուն կրօնքին
 համար:

Գրագիւր.— Անհաւասար է պատմարա-
 նը: Անիկա մրապներ կը չինէ, որոնք իրր
 թէ ֆերրոպիան հկարպիր պիտի ունե-
 նան: Բայց որոնք հասարակ ու բնագոր-
 սիկ հեռորութենէ մը անդին չեն անց-
 նիր: Անիկա պատմող ըլլալէ աւելի նօթա-
 գրող մը կը ներկայանայ իր ամբողջ գոր-
 ծին մէջ: Նախ՝ տեսնալու ձե չունի: Այ-
 սինքն դէպքերը իրր կեանք, բարխոնն
 իրականութիւն չեն տպաւորեր զինքը:
 Անոնք սողի, զլուխի կը վերածուին շատ
 անգամ ինչպէս ողջ մէկը՝ երբ պատնուած
 գագաղ կը զրուի: Նոյնպէս անձերը տար-
 տամ են: Գիրքին մեծագոյն մասը պատ-
 մողին անձնակական, անմիջական շրջա-
 նակի մարդերով է լեցուած: Բայց անոնց-
 մէ ոչ մէկը մեր մտքին մէջ սեփական դէմ-
 քով մը չի դժագրուիր: Զինքը կապող,
 բանտարկող ստտիկանն անգամ չենք ճանչ-
 նար: Ու այս տեսնելու ձեք ընդհանուր է
 ամբողջ գիրքին համար: Կը զարտուղի երբ
 բնական մեծ աղէտներ (երկրաշարժ, հր-
 դեհ, սով) կամ գոտական վկայագրութիւ-
 ններ կը նկարէ: Այդ տեսակ էջեր են իր
 համբաւաւոր սովի պատկերացումները, որ
 իրողութիւններ կան անշուշտ, բայց այն-
 պէս մը շարակարգուած, ընդլայնուած որ
 մարդ շարագրական փորձ մը կարգալու
 պատրանքը կ'ունենայ: Յովհաննէս պատ-
 մարանը կ'օգտուի մանաւանդ եղիչէն երբ
 անոր տուած վիճակներուն նման կացու-
 թիւններու հետ գործ ունի: Այս տկարու-
 թիւնը պատճառ է որ զիրքին մէջ զբը-
 ուաղները պիտի բոլորովին: Բայց ա-
 նոնք կային իրականութեան մէջ: Շրջանը
 մեր պատմութեան ամէնէն բարեբիկ շըբ-
 ջանն է գուցէ: Իշխաններ ու անհատներ
 պայքարած են անշուշտ հարաւէն եկող-
 ներուն դէմ: Ու անշուշտ մեծ բանակնե-
 րու սաքին կոխան է եղած երկիրը: Բայց
 այս ամէնը տրուած են շատ հարեանցի,
 այնպէս որ երբ գիրքը կը գոցես, մտքիդ
 մէջ ոչ մէկ կարկոտուն գիծ կը մնայ:

ՊՍՏՄԱԿԱՆ ԱՐՄԷՐ.— Գիրքը կը գնա-
 հատուի իրրե ճշգրտաբան մէկու մը գոր-

ծը: Ես չեմ կրնար այդ վերագրուածը քնն-
նութեան ենթարկել: Բայց ինձի համար
երկրորդական նշանակութիւն ունի այդ վա-
ւերականութիւնը: Գուտայանազիրութիւնը ճշ-
գութիւն ուր յաջորդութիւններ և գահա-
կալուսներ կը նստնան, բայց ուր չի մըտ-
ներ ժողովուրդի վաւերական զգայնու-
թիւնը՝ արուած պահէ մը, չըջանէ մը: Պատմարանի այս կարեւոր ստաքիւնութիւ-
նը մինակը չի բաւեր դէմք մը արուեստին
բարձրացնելու համար:

Ոձ:— Յովհաննէս կաթողիկոս կը փոր-
ձէ այն ոճը, որուն նախատիպը կուզայ
կործնացիլէն: Անիկա արհամարհանք ունի
գրեթէ Շապուհ Բագրատունիին գէմ, ո-
րուն պատմելու ձեւը կ'որակէ «գեղջուկ
բարբառ»: Ու քերթողութիւն արտայայտելու
իր ձեւը մնայուն նկարագիր մը կը դաս-
նայ և կը կազմէ անոր ոճը: Յատկանիշ-
ներ են

1. Հովանիներու ստաստրիսի
2. Բաղդրանկնութեան հրդ
3. Քերականական օրհն/ներու զիմ զան-
ցատրիսի (ոչ միշտ)
4. Կուսակում բառերու, բացատրիսի-
ներու (երբեմն խնայի)
5. Թրախ
6. Առագոսիսի
7. Խորացնան ճիգ
8. Հոնտրութիւն
9. Ուռուցիկութիւն
10. Մրարիսի

ԳԻՒՅԻՆ, ԳԻՒՅԻՆ: Անկախաբար իր զը-
բական թերութիւններէն ու յորինուածքի
անխնամութենէն, գիրքը գերազանցապէս
թելազրոյ է ու կ'արտայայտէ անտակ մը
լմտաստարութիւն: Անիկա մեր միջին
դարն է, քաղաքական թէ հոգեբանական
տեսակէտներով: Մեր բարքերէն այն քիչ
մը բանը որ սպրդած է հոն, մեր իշխան-
ներէն այն դժբախտ կեանքը որուն իրա-
դարձութիւնները կը լեցնեն անոր էջերը,
մեր հուսաարին այն կատաղի extaseը ո-
րուն տարփոզն է ան, մեզի կը տանին
մտապատկերելու այդ մտայն շրջանը ուր
փառքերէ փառք ու անդունդէ անդունդ
անցնող մեր ցեղը իր յետին գալարումները
կ'ապրի գարաւոր գերութեան վերջնական
համակերպումէն առաջ: Կ'զգաս որ այդ
ցեղը աչիս մշտապէս կտրած է յոյսը իր

քաղաքական ճակատագրէն ու բնազդով
կը փոթթուի գերազոյն կուսանին, որ իր
խարխլած գոյութիւնը պիտի պաշտպանէ
տօրական, թշնամի տարրերուն մէջտեղը:
Վարդանանց նահատակութեան նուիրուած
գիրքը (նշիւն) տարտամ կը մնայ հակա-
ռակ իր բոլոր շքեղանքին, այս էջերուն
մօտ, որոնք արուեստէն չեն աննր իրենց
ներգոր կենդանութիւնը:

Նիկոլայ (Կիպրոս)

Յ. ՕՇԱԿԱՆ

Յ Ո Ւ Շ Ե Ր Ն Ի Շ Ե Ր

Աշունի գրականութիւնը կը տիրապե-
տէ:

Գարուն գրիչներ կը բողոքեն, մեր մէջ
և ամէն տեղ:

Հինը նորը կ'անգոսնէ: Նորը հինը կը
ձաղրէ:

Ճիսկո՞մ Փափինիի Այս գրականութեան
վրայ— «Su questa letteratura» վերատաու-
թեամբ նորածին «Պէզաս» մէջ քննադա-
տական գրութիւնը աջէն ձախէն կը քար-
կոծուի և կը քննադատուի վարպետներէ
և սկանդիններէ: Զարմանք չէ: Վերածնուն-
դի գրականութեան ասպետներ կ'ուզեն մը-
նախ անոնք միայն, որոնք թեւակոխեր են
աշունը:

Ոչ մէկ աստղ ետ չի դառնար, չու-
զեր տեսնել իր յաջորդը: Արեւելք չի տես-
ներ Արեւմուտքը: Գարունի գեղատի գը-
րողները նշանակութիւն չունին աշունի
վարպետներուն քով:

Այսպէս կը մտածէ նաև Պ. Արշակ Զօ-
պանեան. ասոր սպացոյց՝ կ'ուզէ վերա-
կանգնել «Անակիտ» գրական տաճարը: Եւ
անա մեր նոր գրականութեան փոքրիկ
քուրմերը պարստաբի կ'ուզեն «Մութ խա-
ւեր»ու հեղինակի ճակտին:

* * *

Եւ անուն մեր մոռացի . . . հիները
զայս չեն ուզեր լսել և ոչ իսկ երազի մէջ:
Սակայն նորերը խորշերով բազմաժամա-
նակեայ թառամ գրականութենէն, չեն ու-
զեր հաւատալ որ ժամանակին հիներն ալ

ունեցեր են աղօտք վարդաստաններ և նոսնակաց չէնող պողպատաններ:

Տղայամիտ և քիչ մըն ալ շարամիտ նախանձէն շարժեալ հին ու նորի պայքարը երթալով կը բռնկի: Մեր գրական և լրագրական պատմութիւնը լրջօրէն ուսումնասիրողը պիտի անգրագոսնայ որ կուսքի պէս պաշտուած են այն հեղինակները, որոնք չեն գոված իրենցմէ աւելի միջակ միջակութիւնները:

Հին ու նոր գրողներէն անոնք որ փառքի մաւրացիաններն են, որքան որ արժանիք մը չունենան, ատով հանդերձ կը պահանջեն որ ծափահարութիւն շմերժուի իրենց: Փորձառու գրագէտ քննադատը կ'արգահատի այդ փառաստենչիկ գրողներու վերայ:

Ի՞նչ կարելի է ընել. . . «Պրոփիւնըն ժողովար գիւնիլ ոսկի կարծեր»: Առաքել Սիւնեցին այդպէս է բաժ, այդպէս ալ մտածեր են մեր հին գրողներէն ամէնէն անարժանները:

Այդ պղինձ գրիչներն են որ հինի նորի պայքար մղեն:

Հիները նորերը անգոսնելու չեն: Հինը նորի արժանիքը մոռնալու չէ:

«Պայխար»ի մէջ ինծի անծանօթ մը անցեալները զիս քիչիկ մը կը խժբժէր, բսելով որ ես պարզապէս քաջալերելու համար կը զոգեմ և կը զնոհատեմ նորերը: Ես արդ՝ անոր կը պատասխանեմ. «Մարդու չհանողը շատ աւելի դժբախտ է, քան անիկա որուն մարդ չի հաւնիր»: Իմս չէ այս իմաստուն խօսքը՝ ալ ևս Ռոջֆուգօյին:

* * *

Ժամկոչներու սեպհականութիւնն է գարձեր չպարեալ և շփացեալ գրականութիւնը:

Ինչո՞ւ այսպէս կ'ըսեմ: Ժամկոչը ամիրաներու բազկաթողը կը մաքրէր, և աղքատին մինտէրին վրայ կը կոխէր կ'անցնէր: Առաջինը կը յարգուէր, վասնզի կուտ ունէր գրպանին մէջ, երկրորդը կ'անարգուէր, վասնզի կուտ չունէր մինտէրին տակը:

Կը մեռնի հարուստ մը, թաղմանական սիւնակներ կը նուիրէ լրագիրը անոր կենսագրութեան: Կը մեռնի աղքատը, ան դուցէ աղքատացի է հասարակութեան շա-

հերուն և աղքատին գրամ չինայելուն համար: Այդ ի՞նչ փոյթ գրական ժամկոչին:

Այսպէս խորհելու իրաւունք ունիմ, երբ կը աւանիմ որ կը մեռնին կարգ մը անձնաւորութիւններ որոնց մասին կը լռուէ մամուլը:

* * *

Մեռաւ Անմեղեանը, չորս տողէն զտրան մը չգրուեցաւ վրան: «Գրիչ և Սուրբի յարգուած, սիրուած հեղինակը իր թերթի աշխատակցին վրայ շատ բաներ կրեար գրել «Վոչկամի»ին մէջ (ուր ընդհանրապէս կը կարգամ իր համով հոսով յիշատակաբանը). . . բայց լուսթիւն կը պահէ, և այդ լուսթեան պատճառը ինծի անծանօթ կը մնայ (*):

Գարձեալ ինչո՞ւ Անմեղեանի ժամանակակից խմբագիրները որ ներկայիս կարգ մը պարբերական թերթերու մէջ գրել կը շարժեն, և լուսթիւն կը պահեն: Կուսակցական . . . թէ անձնական խնդիրներ կան . . . : Մեռելներէն ալ ողջերը հաշիւ կը պահանջեն: Հայ մամուլը շատախօս աղաւ մը կը նմանի. հարկ եղած տեղը կը լռէ, հարկ չեղած տեղը կը խօսի:

* * *

Մեռաւ Սեղբակ Ծովիկեան: Ծանօթ անծանօթի մը պէս ապրած էր, անծանօթ ծանօթի մը պէս մեռաւ: Միք. Վարանդեանի և Ա. Ահարոնեանի անծանօթ մը չէր: Հին հնչակնեաններուն ալ անծանօթ մը չէր: Արտասահմանի խմբագիրները չուզեցին զիանձլ թէ ինչո՞ւ ան Պայքարի դէպքէն անմիջապէս վերջը Սերաստիա տքսորուեցաւ: Եւ չզանուեցաւ մէկը Միլանի մէջ որ անոր մահուան ասթիւ անկեղծ ըլլար բսելու թէ ան ինչեր կատարած էր Միլանի հայ հասարակութեան աղգանուէր գործնական կեանքին մէջ: Ես հոն մօտէն ակնատես եմ եղած. բանուորը, ուսանողը, արուեստագէտը, գրագէտը, դիւանագէտը, հայրապետութեան ու հանրապետութեան նուիրակները բարեյլաշատակ Ծովիկեանէ կը հիւրասիրուէին: Հայը հացի կարօտ, գործի կարօտ՝ անոր

(*) Արուշան երբ կը գրէր այս տողերը Գրիչ և Սուրբի հեղինակը, Մինաս Զեբաղ, մահուան հետ կը պայքարէր: Այս պիտի ըլլայ անոր լուսթեան պատճառը: Խմբ. Ս.Ո.Ն.

ամէն դուրսը կախած չէր հետանար: Ան ամէն առեւն աղգասիրութեան շարժիչ մեքենան կ'ըլլար: Գարոց, եկեղեցի կանգնելու պարագային, ամէնէն առաջ Ծովիկեան մէջտեղ կը նետուէր, Մարտիկեաններէն սկսեալ ամէն հայ հարուստի գոտը կը գարնէր, յուսահատ մերժումներու առեւն չէր յուսահատեր, կրակ տեղացոց արեւին կիրիչ երկինքին տակ, ան ինծի հետ գունակ գոտ կ'ըլլար, համեստ գունամար մը ձեռք կը բերուէր և կը վարձուէր չէնք մը ուր տաղին անդամ կը պատըսպարուէին մեր Մխիթարեան միարանութեան որդեգրած որբերը:

* * *

Ճի՞շդ է արդեօք իտրենացիին ըսածը թէ. «Առ հինն Հայաստանաց շեղ սնտի-րեղորին ինաստրեան և ևրգարանաց բանաստրաց:» Բայց Անանիա Շիրակացի ևս ուսմունքի այդ անսիրելութիւնը դատապարտած է: Ինչպէ՞ս մեկնել օրէ օր նոր թերթերուն ածուճը: Կ'ապրին այդ թերթերը, ուրեմն հայը կը սիրէ գիրքը, կը սիրէ ուսմունքը և կ'ապրեցնէ իր հին ու նոր թերթերը: Ի՞նչ կ'ըսեն թերթերու խումբադիրները: Չեմ հարցնեմ յօդուածագիր անխատակիցներուն. անոնք զրջով չեն ապրիր:

* * *

Բայց դրամութիւնը, բնէ կ'ուզեմ գրելով ապրելու փաստութիւնը մեր ցեղին ժառանգական հիւանդութիւն մը դարձաւ: Քնարով, զրջով ու ս'ր կը յուսայ ապրել, խրատ մ'ունիմ անոնց այս համեստ քասեակովս. թէ գրելը շարժեր և ոչ մէկ գենար, Բրիչգ ա'ն ձեռքը, պարագ մի՛ կենար: Անթիւն երգելով փորը կ'ըր կըլտացուց. Ասոր հակառակ ունի՞ս ապրոցոց:

* * *

Անպարկեշտ իգական տարադի գէմ Լատին եկեղեցին բուռն պայքար կը մղէ: Եկեղեցիէն կը մերժուին անաստողները: Հայ եկեղեցականն ալ վազուց ասոր գէմ խտիւ բողոքած է, Յովհան Մանդակունի հայրապետը կ'ըսէ.

«Եւ արդ ոչ անիւ և խանդաղատադին մաղթանօք կամք առաջի Աստուծոյ՝ աղա-

չել և մաղթել զվիրացն բժշկութիւն. այլ ի ժամ աղօթիցն և պաղատանոցն և թողութիւն մեղացն խնդրելով՝ լուանամք և օծանիմք և զհանդերձսն պաճուճեմք, որպէս թէ ի բողանոցս կոչիցիմք, կամ ի թատերս խաղուց . . . »:

Լատին օրիորդը այս բողոքին գէմ կ'առարկէ թէ ինչո՞ւ լատին կղերք մօտայի հեռեկեղծ հեծեկանիւ կը նստի . . . Հայ օրիորդը կ'առարկէ թէ ինչո՞ւ մեր վարդապետները, հակառակ հին եկեղեցական օրէնքին, մօտայի հեռեկեղծ մօլուքին թողք փաշաներուն պէս կրճատ ձեւ մը կուտան:

* * *

Մարդկութիւնը միշտ միեւնոյն ձեւն է, և միշտ միեւնոյն երիտասարդը: Հին բարքերը միշտ կը նորոգուին: Լորտ Պայրըն «Մարդանարաջ» մէջ իր ցփութիւնները կը նկարագրէ: Իր կինը Լարա երբ բժիշկէն կը ստուգէ որ իր այլը զիտակցութեամբ և ոչ թէ խնթ վիճակի մէջ գրած է այդ խնեղութիւնները, կը խզէ ամուսնութիւնը, կը բաժնուի իր բանաստեղծ այրէն: Գար մը վերջը այդ հինցած բարքերը կը նորոգուին «Ներսէս Երգերու» երգիչին բաղնիքներուն մէջ: Բարքերը կը հիւնան, բարքերը երիտասարդ կը մնան. և ահա այս օրերուն մէջ Պ. Մարկոսեանի թարգմանած «Շրջիկ Մասունան» վէպին մէջ կը տեսնենք որ Պայրընի Միլբրան աւելի պարկեշտ է քան Մօրիս Տեքօպրաի Մասունան:

Սպարտական կիսամերկութիւնը կը նորոգուի ժամանակիս իգական ասրագովը: Լա Պրիւէր եթէ ողջ ըլլար՝ հակառակ իր աղատամտութեան՝ աչքերը դոցած պիտի բանադէր կիսամերկ նոր սպարտուհիները: Ու մօրուքին կրճատող հայ եկեղեցականներն ալ պիտի ազատէին իրիմեան Հայրիկի բանադրանքներէն:

ԱՏՐՈՒՇԱՆ



ՆՇԻԱՐՔ ՆԱԽՆԵԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Մ. ԱՇԽԱՏՆԱՐԿԱՆ ԱՆՍՏՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՎԵՏՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

(Շարունակութիւն)

Մին ամուսնանայ ի բողոքացուցանել, և միւսն ի սպասելի և յաւազակի(1): Մին տայ յանցուցեալս զոգուելիս, և միւսն ևս պատու զաւրհնեալս: Զի յաճախեաց յաւորս նոյն պոստիւթիւնն անգաւակիչ մարդկան: Անգաւակեաց զնոսա ջրհեղեղն զի զարծցի անկեղուցէ՛ զամուսնութիւն: Եւ զոգուութիւն Աքարու, պարտեաց զժողովուրդն ի պատերազմի(2): Ելին պարտաւրք և առաքինեցան: Փախեան յողթողքն և պարտեցան: Զի ցուցցէ թէ զոգուութիւն բեկանէ՛ զկողմանս ի պատերազմի: Որոց է իւրեանց(3) այսուհետև պատերազմ բնակաւոր ի միջի, ատեցեալն զոգուութիւն որ թափէ զոյժ ի պատերազմի: Մի եղիցին աստ զողք ի քաղաքիս, որ մա՛ւտ է ի պատերազմ: Զի եթէ Աքար որ յողգողեաց և փրասեաց, քահի՛ր ևս փրասեցին բազումք:

ՄԵՏՏԱՍԱՆԵՐՈՐԴՎ. ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ:

Եղև քաղաքն որ կործանեցաւ, նըշան ամենայն արարածոց: Զի զոյն ի նմա սուտք որպէս և ի տիեզերս խարերայք: Գոյն ի նմա և հաճոյք, որպէս և ի տիեզերս արգա՛րք: Գոյն ի նմա ըստուգութիւնք, որպէս և ի տիեզերս ճըճմարտութիւն: Գոյն ի նմա և աղտեղութիւն որպէս և ի տիեզերս պղծութիւն: Գոյն ի նմա և յամենայն իմեքէ, որպէս և ի տիեզերս ամենայն ինչ: Թիբևս Աստուած աստիկ ստուգութեամբն հարկանէր զամենայն արարածս(4): Եւ ոչ եթող զնոս ոգորութիւն իւր, ապականել զասկնայն արարածս: Մասն մի եղծ ի տիեզերաց, զի մի՛ ապականեցէ զամենայն: Եղև քաղաքն որ խլեցաւ, զոգուութիւն ամենայն

արարածոց: Զի եթէ զարծցին, կեցցեալ: Եւ եթէ անաւրինեցին, ընկղմեցցին: Ստուգութիւն որ պահանջեաց ի նմանէ, ոչ եղև ակնառու ամենայն: Ոչ զոյն ակնառութիւն, ի պարզ և յստակ ստուգութեանն: Գոյն նմա ընտրողութիւն որ մրտաց ակնառութիւն թուի: Եպերէ անթիտն եթէ ընդէ՛ր մին մեծ է, և մին աղքատ, և ոչ լսէ կարողն թէ կարգն այնպէս պահանջէ: Եթէ ոչ գոյն աղքատ, ի՛նչ շահ մեծատուն: Եւ եթէ չէր կիր արոց, ոչ լինէին սերմանեալ տուրք: Եւ խափանէին աւտիք պարզեաց, զի ո՛չ գոյն նիւթ շահի: Գործէ մեծատուն զերկիր, զի հնձեացէ՛ ի նմանէ զարմախ: Նա տածեցէ և զաղքատութիւն զի ժողովեցէ ի նմանէն զանձս: Երկուս երկիրս ևս նմա Աստուած յորս(1) վաստակեցէ, ևս նմա զերկիրս սերմանել, և զաղքատութիւն մեծանոց նոգաւ: Որպէս սերմանէ յերկիր զսերմն, սերմանէ ի նմա և զտուրս իւր: Զի երկուս աշխարհս ևս նմա, երկուս երկիրս ևս նմա: Զի աստ կեցցէ արմատաւք, և անդ տրաւք ոգորմութեան: Մեծ է աշխարհն քան զայս աշխարհս, և տուրք նորա քան զարմախ մեր: Յոյժ լսու են արմախ աղքատութեան քան զերկիր Սերմանեա ո՛ մեծատուն յաղքատութեան զտուրս քս, զի միոյ հարիւր յայսմ աշխարհի հնձեցեա ի նմանէ զարմախ: Անդ քս է աղքատութիւն, զորմեա զնոս հացի և ջրով: Յաճախեա սերմանեա ի նմա տուրքս, զի յաճախեցէ տացէ զզանձս: Այսպիւրն արողութիւն անաւրինութիւն թուի անսի մտին: Եպերէ անմիտն եթէ ընդ(2) էր են մեծատունք և աղքատք: Եպերեացէ եթէ այդպէս է, եթէ ընդէ՛ր են անդք և մշակք, իբրև ինքն աղքատութիւնն անդ է: Որունի աղատութիւն, ունի նա զպատու օգուց: Զի ունի անձն զիշխանութիւն, իբրև

(1) Թուի թէ զրջի վրիպակ, ընթեռնի՛ յանգաւակի:
 (2) Հմտա. Յես. է. 1-26. և Իբ. 20. նաև Ա. Մնաց. Բ. 7:
 (3) Յուելեալ ի լուսանցս:
 (4) Բառս այս ի լուսանցս յաւելեալ:

(1) Այս բառ յաւելեալ յուղղէն:
 (2) Էնդ զրեալ ի լուսանցս ի ձեռն ուղղէին:

մեծանայ նովաւ մեծատուն, մեծանայ եւ նա ընդ մեծաաանն: Մեծատունն մեծա- նայ արողք եւ նա ⁽¹⁾ մեծանայ աղաւթիւք: Եպիբե անմիան կթէ ընդէր մին հարկանի զի միւսն երկիցէ: Եւ զրկեալ է ի հանձա- րոյ, թէ յորդէ գաւաղան խրատչին, քան- զի յորդէ մեծութիւն շաւնութիւնս իւր քան զքննողս: Յորժամ քննողն սկսանի եպիբե, ահարն ոչ զիտէ թէ ահարութիւն իւր վրիպեցաւ առ յարժանէն: Կարժէ թէ չիցէ ինչ արժանն, գտնաւ[չ] ⁽²⁾ եպիբե յարժամ վրիպի, բայց չէ՛ մտացեալ զար- ժանն ամենազեա արարիչն: Ա՛յ եզ աին զիտխանակ ունկանն ⁽³⁾, եւ ոչ ձեռն փո- խանակ սովն: Ի զորժոյ արուեստագիրքի, տարէն է ⁽⁴⁾ զիտեղ զմիտս նորս: Արարչու- թիւմը հաստչին, ծանկը զիմաստութիւն հաստչին: Այ եպիբի կոչմանն նորս, զի կատարեալ է արարչութիւն իւր: Արդ զի ի վեր է յեպիբելոյ, կատարի՞ է որ եպի- բէ զնա: Չէ՛ մտացեալ նմա եւ ոչ մի ար- ժանն ի յարինուածոյ արարածոց: Եթէ նայեցի բսա աւրինի հանձար, փո՛քք է բերան առ ի գոհանաւ: Չափեալ եւ կշռեալ է ամենայն ինչ, երկինք եւ երկիր, եւ որ ի նոսա որպէս յայնի յարինուածին: Այ մտացաւ նմա մի արժան, եւ ոչ ի ծա- ծո՛ւկ վարչութեանն վրիպէ ի նմանէ՛ մի արժան: Արդ ո՛չ հարկանէ եւ եղծանէ յանողորմ զամենայն արարածս: Հարուա- ծողք միոյ անկեանն, երկեցո՛ց զչորս ան- կիւնս: Եւ զի ջնջեալն զարարածս յա- տուրս նոյի, սահա՛ւ ինչ ազգ էին: Յայն- ժամ զիս նոքա սահաւա՛ւք էին, եւ ամ- պարչատութիւն յո՛յժ էր ի նոսա: Չի ի ⁽⁵⁾ սահաւան թափեաց արկ անաւրէնութիւն զյորդ թոյնս իւր: Եւ որպէս զի ի հարուա- ծոց իժի ապականի ամենայն մարմինն, կամեցաւ սատանայ ի սկզբս ⁽⁶⁾ տարա- ձիլ զթոյնս իւր յամենայն զարս: Չզու- խըն աշխարհի եհար, զի ապականեցէ՛ զամենայն մարմինն, Աորհեցաւ անաւրէ- նութիւն, զի սկսցի եւ կատարեացէ: Չի թոյնք ի սկզբանն ընթացցին ի զլուին, ի

մէջ եւ ի կատարումն: Իսկ Աստուած ու զորմութեամբ իւրով, ա՛ծ ջուր հեղեղ յեր- կիր, լուաց զթոյնս զսկզբանն, զի մի՛ կո- բիցէ նովաւ կատարումն: Եւ ի սկզբանն իսկ ողորմեցաւ, զի կարճեաց ըզնա յամ- պարչնութեանէ: Փոխանակ առաջին զլսոյն յարմէ ըզխեաց հրանդութիւն, եկաց նոյ զլուխ առողջ, զի ըզխեաց ի նմանէ ա- ռողջութիւն: Բայց նոյ զլուխ երկրորդ, խորհուրդ է երրորդիւն: Էջ զլուին երկ- նից, զի զնայէ յերկրի առողջութիւն: Աւրնեաց բարեբարն իրբւ երբարի, զլսոյն միջնոյն եւ կատարմանն: Այժմ՛ պահեաց զարարածս եւ մասն մի ապականեաց ի նմանէ: Եհար ապականեաց զսակաւս, որ- պէս զի ուղեացէ՛ զբազումս: Կորուսելով- քնն որ ոչ զրկին, գտանէ զկորուստ մեր: Եհար զնաւագունս, զի նոքաք երկիցուս- ցէ՛ զրիւսս եւ զհագարս: Չի եղին պատ- ճառ աւրնութեան, ո՛չ զրկին յաւնութե- թեանէ: Չարթնուն ի վախճանի ի կեանս, զի զարթուցին զքնէ՛ածս ի խնդրուածս: Յապականութիւնս որ եղին եւ որ լինին, ծածկեալ են աւրնութիւնք: Չի յամենայ- նայնի զոր առնէ զթամն, աւրնութիւնք ծածկեալ են: Բազաքն որոյ կորեան յարի- նուածքն, կորեան եւ շարիք իւր: Ամա- շեաց անդ քաղզեութիւն, եւ կորեա՛ւ անդ զիւթութիւն: Ընդ նոսին եւ ի մէջ նոցուն հեզձաւ եւ կախարչութիւն: Աղբիւք գառ- նութեան, որ քաղցր են գառն մարդոց: Կորեան անդ քաղզեալք, եւ կորեան ընդ նոսա պարթութիւնք ⁽⁷⁾ իւրեանց: Մինչ աչք իւրեանց յաստեղս էին, եւ մատուցք իւր- եանց ի համարս, կորացոյց զնոսա ստու- գութիւն, զի մի՛ եզլեցին քննել զձածու- կըս: Յայնի բարկութեամբ ապականե- ցան, զի սիրեցին զձածուկ քննութիւնս: Թերեւս նոսէր անդ քաղզեալ, եւ շուրջ զնովաւ պատեալ մոլիք: Բաձանէր տայր ճննոցոց, եւ ապուր առնոյր կարասի: Ա- տեցին անմիտք զձիբ ճշմարտութիւն, զը- նոց զնէին զստութիւն: Ատեցին զճշմա- րիտ զիտութիւն, եւ ետուն վարձս մոլո- րութեան: Ատեցին զկեանս ձրիս, եւ զնե- ցին ծանու գման, Ծանուք են մեզ ուղ- զակիք, եւ թեթեւք են ձախողակիք: Իրժ-

(1) Նա յաւելուած ուղղչին ի վերայ սողին:
 (2) Յոր. առանց չ:
 (3) Նախ զրեալ ուզանն, զոր ուղղէ սրբագրիչն:
 (4) Ուղղիչն յաւելու է:
 (5) Յաւելուած ուղղչին:
 (6) Երկրորդն Ե յաւելուած ուղղչին:

(7) Յոր. ունէր՝ պարսիւք, ուղղիչն յաւելու Ե ի վերայ սողին:

ուարին է մեզ դալ յառաջ, և յետս զիւրա՛ւ ընթանաւք: Ստատնայ ի ձեռն մուրհիւց վարձուք կորուսանէ՛ գանձինս: Ի ձեռն աւձի տանն Ազատայ բաշխեաց ևս մահ՛ն ձրի: Չարն որ ձրի կորուսեալ է, մահ՛ն զնոց վաճառէ մեզ: Այ զի ասցուք ակն ունէք, զի ո՛չ ինչ տա[յ]՝⁽¹⁾ նմա բարի: Զխորեալ, կեղծիս ծանու տայր, զի կարճեցուցէ՛⁽²⁾ թէ տա՛յ ինչ: Ընթերցաւ քաւղեա[յ] ձննդոցս, և ևր՛ճ զընտուստուգութիւն: Զոր ինչ կապեաց անդ սրտութիւն, ևր՛ճ անգէն ճշմարտութիւն: Ընթերցաւ աղքատ ի մեծութիւն, և մինչ կամէր խնդալ, չիք եղև: Յարեաւ բարկութիւն յանկարծակի, և զերփեալց զերկոսին ի միասին: Որում տայր վիճակ բարի, չար պատահեաց նմա յանկարծ: Ընթերցան ամլոց յդութիւն, և էջ ի զժոխ յանկարծակի: Ամուլ զամուլ յղացաւ, մինչ ծնուցէ՛ զնա կենդանութիւն: Դժոխք տմուլք ընկղմեցին զամուլն որ հարցանէր զգիթս: Մուրեալն որ վիճակս⁽³⁾ բարժանէր, և բարկութիւն առ դուրս կայր: Զմաւտեալ բարկութիւնն ոչ զխտաց, և հեռաւոր իրս քննէր: Զոր առաջին կայր ոչ տեսանէր, և զհեղալս և զաղաւնիս երկրորդէր: Որում ևս կեանս ընդ երկարս, մահ իւր առ ընդան կայր: Էր որում ևս քնակութիւն հեշտ, և եղև սուն իւր գերեզման: Էր որում ընթերցաւ ազնութիւն, և զրկեցի՛ն զնա և յորմէ ունէին: Երկայնեաց և կարճեաց դաւրճաստ, և հասարակեալց զնոսս մի հրամանն: Էր որում ընթերցան մահ ի ծովու, և հեղձոցցամա՛ք փոխանակ ծովու: Ետ վիճակս բարիս և չարս, և սուտ եղևն ի միում ժամու: Ասաց զեղեցոցն նախ քան զժամանակն ևս որ լինին յետ ժամանակի, բարկութիւն որ բղխեաց ի միջի, սո՛ւտ արար զերկոսին: Յերկինս պշուցեալ հաշէր, և զերկիր ո՛չ տեսանէր: Զծածուկս կայր պատմէր, և զյայտնիս ո՛չ նշմարէր: Էր որում ևս մահ ի բարի, էր որում ևս կեանս ի գերիտ: Ասանց յանդիմանչաց խառնէր սուտ, և կա՛յ յանդիմանիչ առ

զլուխ նորա: Էր որում ևս վիճակ մեծութեան, և միւսումն ևս ազքատութիւն, անանկութիւն և մեծութիւն, և բարկեցի՛ն զնա երկաքին ի զժոխս: Էր որ ծնաւ և կուլեաց զնա զի բաժանեցէ նմա ձնեգոյս: Եբաց զգպութիւն իւր համարել, երա՛րձ զնա բարկութիւն անհամար: Մուր յանկարծակալ զիւթ, և տայ մուկ և ալոց անմիտ կնոջ: Ետ միտս և լիտի կնոջ զպակասութիւն: Զարդէա կին իրն զացոյց կեղծեալք, և զանհամե մենքնասչիւք: Երջողին պարասեաց որողայթ, և քանդապուշկոյն խորխորատ: Ետ զիւր կին զնովու անմիտ կանայք որ զնեն զմիտս զնոց: Մինչդեռ մուրէր ի մէջ կանանց, ծածկեալց զընա սուն ի մէջ կանանց: Այպանէր խարկութիւն զկանայս, նախանձեցաւ ճշմարտութիւն և խիւաց զնա: Դուցաց քաղաքն և անկաւ յանկարծ, և չագա՛ւ ամենայն սք ի մեզս իւր: Եղև բարկութիւն վասն չարեաց, զերփեաց զբարիս ի պատճառս չարաց: Զարաց նոցա երկու տանջանք: Բարեաց նոցա երկու շորհք, կրկնեցան շորհք արդարոց: Մեղմացան տանջանք մեղաւորացն: Աստ ևս անդ տանջանք նոցա, իրբև մեղմաւ են գանք նոցա: Երկերուք կանայք անմիտք գտակք Եւալի ազիտի: Եւ առ նա ևմուտ աւձն որպէս առ ձեզ մտանեն զիւթք: Քաղցրացոյց զբերան իւր աւձն, իրբև զքաւղեա[յ]՝⁽¹⁾ հաւաստի: Աստացաւ նմա մեծութիւն զի ընկեցէ՛ զնա ի փոքրկութիւն⁽²⁾: Զգեաց զնա ի բարձրութիւն, զի անցէ՛ ի խոնարհութիւն յայտնի: Առ Եւայ խրատ յաւձէն, և պտուղ ի ծառոյ անտի: Ի վերայ մորտութեան երից այն, մի՛ սրտութիւն յայտնեցաւ: Ընկալաւ Եւայ յրդութիւն ցաւաւք, և Ազամ քրտամք: Եւ աւձն որ եղև միջնորդի⁽³⁾, և՛լ անտի առանց ասից: Զեզ ասեն դատերս Եւայի, եզիցի ձեզ մա՛յրն ձեր հայելի: Մի երթայք զիւթել ի ծածուկ, զի մի՛ եկեցէ բարկութիւն յայտնի: Տեսէք զքաղաքն, զի կորեա՛ւ ի նմա զիւթութիւնք և զիւթք ի

(1) Յօր. զրի առանց չ:
 (2) Օր. ունէր՝ կարճեցէ: յորոյ վերայ յաւելու ուղղիչն՝ ցու:
 (3) Օր. զնէ՛ վեակս. յորոյ վերայ յաւելու ուղղիչն՝ ի:

(1) Յօր. զրի առանց չ:
 (2) Օր. վերջանօք ունէր՝ փրկուքիսն. ուղղիչն յաւելու՝ ո՛ր:
 (3) Եթէ միջնորդի ուղղական խնդիր բնութեան համարելի էր, յայնժամ իրբև նոր բարգրելի է:

միասին: Չոգաւ զիւթ ի պարտիս իւր, եւ (1) անմիտ կանայք ի մեղս իւրեանց: Չոգաւ քաւղեայ ի չարիս իւր, եւ որք անասցին նմա ի մեղս: Չոգաւ կախարդ չարաչար, եւ չա՛ր քան զնա որ վարձեցան զնա: Նա չոգաւ ի մեծ չարիս, եւ նոքա ի զա՛ն անաւրէնութեան: Ինչք եւ ատարք եւ որդիք որ վասն նոցա ամպարչտեցան: Կորեան պատճառք մեղացն, եւ մնացին մեղքն առ գործելիս իւր: Կորեաւ զիւթութիւն, եւ կայ վնաս իւր: Կորեաւ կախարդք, եւ կան պատի՛րք իւրեանց: Կորեան զէտք եւ վնուկք, եւ մնացին պա՛րտք առ մարտեալն: Իր վասն որոյ հրամայեցին, թոհաւ նա, եւ դատաստան իւր կայ: Իր վասն որոյ թիւրեցին փախեալ (2) նա, եւ կա՛ն մեղք իւր: Իր վասն որոյ կախարդեցին կորեաւ նա, եւ կայ ամպարչաութիւնն: Կորեան զիւթք, կախարդք հմայողք եւ պահեա՛լ է հարուած նոցա ի դատաստանի: Կորեան աշտիճանք եւ զանձք եւ ինչք, եւ պահեալ է նոցա հար գեհննին: Կորեալն անմիտք զամենայն ինչ եւ զաէրն ամենայնի ո՛չ գտին: Կարճեցայք ո՛ անմիտ կանայք զի մի՛ դաւրացին չարիք ի զիւթութիւնն: Մի զարթուցանէք զբարկութիւն ի քաղաքի, զի մի՛ հղիցի աստ որպէս եւ անդ: Մի լիտի զիւթութիւնս ձեր գերփեցին եւ ծանուցք: Կանն մաւր ձերոյ կե՛տաւ մահ, գերփեաց զբարիս եւ զըշտոս ի միտսին: Մի ամէք զտէք զբարկութիւն, որ գերփէ զարգարս եւ զմեղաւորս: Բորբքի բարկութիւն ի վերայ ձեր, զի մի՛ է ձեզ ստութիւն եւ ճշմարտութիւն: Հաւասար են ձեզ գրունք եկեղեցոյ եւ զիւթաց: Յորժամ մտանէք կալ յազաթս, անգէն խաղա՛յք առ վնուկս: Սահին եւ լիտի կանայք որ երեւին իրրեւ զցածունս: Գողանան զզնացս ի հրապարակս, եւ նկարեա՛լ են ասե՛նայն ուրիք հետք նոցա: Թաքթաբուր երթան, եւ հետ նոցա ազազակէ՛ զկնի ի հրապարակս: Իրրեւ ոչ զիտեն զստուգութիւն, զարթուցանէ ի նոսա գտեսողս: Ճշմարիտ է բանն տեառն մերոյ, թէ որ ինչ ծածուկ է յայտնի դայ: Նախանձի յոյժ ճշմարտութիւն, խայտառակեալ յայտնի զկեղծիւն: Գողա-

նան զսիրտս իրրեւ զչաւուզն, գողանա՛ն զզիւթութիւնս իրրեւ զչաւուզն: Բայց չէ՛ մտացեալ ընտրողաց թէ (1) զիտարգ եւ ուր գտանին: Ձի յայտ է քաղ թէ քա՛ղէ, թէպէտ եւ բուսեալ է ի մէջ սերմանց: Ծածկեալ ընդ ցորենով որոմն, եւ յայտ է թէ որո՛մն է: Ինքն որոմն խարի, զի կարձէ թէ ընդ ցորենա՛ն համարեալ է: Մոտացայք զանուանսն անուամբք, զմարգարէս ի ձեան զիւթաց, եւ զստաքեալս ի ձեան կախարդաց, եւ զվարդապետս քաղէլիւք: Փոխանակ անուանց մարգարէիցն, անուանք աստեղացն երկրորդին: Փոխանակ ընթերցուածոց զբոց, զիւթութիւնք եւ հմայք ուսանին: Յեկեղեցոյ զզպրաւք պատիք, եւ ի սենեակս զզիւթո՛վք: Անուանք զմարմին կենդանի, եւ հմայէք զմտայս մեռեալս: Ո՛չ էին մեծ չարիքն Սողոմայ, իրրեւ զչարիս որ եղեն ի դարուս մերում: Նա թշնամանեաց զմարմին մարդկան, եւ դուք զըսուրբ մարմին սրբոյն: Ի Սողոմ ծառայք թշնամանեցան, եւ ի մէջ եկեղեցոյ արարի՛չն: Ի ժամ զբոց առ ճշմարտութիւն, ի ժամ զիւթութեան առ ստութիւն: Մտանէ քահանայ ի տես, եւ կախարդ ի լուանա՛լ (2): Մտանէ կնքէ ճշմարիտն, մտանէ յուսթէ խարեա՛յն: Ի վերայ սուրբ անուանցն, անուանք զիւթաց երկրորդին: Ո՞ր քաւութիւն եղիցի այնմ գտոն անաւրէնութեան: Թշնամին ի ներքոյ յուսթեաց, անուանքն, որ ի վեր են քան զամենայն ապականութիւն: Որ հաւածեալ էր առ իշխանութիւն յայտնապէս, զի յաճախեաց վխտահրութիւն: Ոտնարհութիւն ընտրողութեան, սաստի՛կ է ապականիչս: Եւ խստութիւն ընտրողութեան, քա՛ղցր է առ խոնարհս: Առ ընտրողութեան երկոքին անհա՛մ են, եւ անհանճար ընտրողութիւն եւեթ, զիտէ զկշիռ խոտնուածոց նոցա: Ի միտում թաղէ զզընդութիւն, եւ ի միտումն եւս զքաղցրութիւն: զմին հանէ ի մին աշտիճան, եւ զմիւսն իջուցանէ ի միւս աշտիճան: Կան ի միջին աշտիճանին որ ոչ ստատիկ է եւ ոչ խոնարհ: Ոտնարհութեամբ ընտրողութեամբ, ցանկեաց Մովսէս (3) զլրամատու-

(1) Յաւելուած ուղղչին:
 (2) Օր. ունէր՝ վրանաւ, ուղղեալ ի սրբագրչէն:
 (3) Օր. գրէ վրիպակաւ՝ մովսէս:

(1) Յաւելուած ուղղչին:
 (2) Օր. վրիպանօր՝ լուալ, յոյր վերայ յուելու ուղղչին՝ առ:
 (3) Օր. գրէ վրիպակաւ՝ մովսէս:

թիւն: Զխտութիւն եւ զբխոնարհութիւն մերկանայր զգեհոյր հանապազ: Յիւր փառս իբրեւ զընարդոս, զգեհոյր զխոնարհութիւն: Եւ ի պատիւ Աստուծոյ իւրոյ զգեհոյր զաստիակութիւն: Թողոյր զիւր թշնամանս, եւ զտեան իւրոյ պահանջէր: Խիստ էր եւ քաղցուենի: Աստիկ էր, եւ խոնարհ: Զանձինն վրէժ պահանջել, խոնարհ էր: Եւ զտեան վրէժ առնուլ սաստիկ: Ժպրհութիւն որ է ի գարուս մերում, երկուս զէնս զգեհաւ: Ինքն խորամանկ է, եւ ինքն ամպարիշտ: Ո՛չ զգուի յապահանութիւնս իւր: Կոպէ զխոնարհութիւնս, զի լուցուցէ զնա ի զգուելոյ: Կարկիակ է խոնարհութիւն զողութեամբք խորամանկութիւն աւ խոնարհութեան պահպանեաց: Յանախեցին խրամք ի ցանկս առնեն յայանի պիղձ կանայք զգործ որոց պատճառ կատարութիւն է: Կնուն զսեղան զիւթաց, առնեն կարկանդակս արուսեկի: Պատկասէ բերան երկրորդիւ, ծածկեցէ լուսութիւն զամաթ նոցա: Ուտեն ի պիղձ հոցէն, եւ առնուն զմարմինն սուրբ: Ուտեն զհաստեայս ընդ շիշաղս⁽¹⁾, եւ ընդ սուրբս զսրբութիւնն: Զարմանք մեծ են, թէ զիտ՞րդ լուեալ կայ հուրն ուտիչ: Զյսունս⁽²⁾ եւ զյսունս⁽²⁾ այն եկեր, որ տարան զպատգամ առ Եղիայ⁽³⁾: Տէր հրոյն թշնամանի, եւ զաղարկալ է հուրն ուտիչ: Հուրն նախանձոտ է, որոյ քուսն է նախանձ իւր քան զվառու մն իւր: Բորբոքի նախանձու, թէ երբ հրամայցի ի վերայ անաբրինաց: Արդեւ՞ զթութիւն միշտ զհուրն որ քաղցեալ է ի մեղաւորաց: Իբր թոյլ եւ փոքր մի զթութիւն, ի միում ժամու եկեր զՍոգոմ: Եղև արձան կինն Դովտայ: Զի գարձա՞ւ փոքր մի հայել: Որ⁽⁴⁾ դարձաւ ի ճշմարտութեանն, զիտ՞րդ արդեւք ապրեացի: Զի՞նչ տացէ քեզ զիւթ մոյլ, այլ զպահասութիւն ծանու տայ գնոյ: Զի՞նչ կարկասիցէ քեզ կախարդ, զի գնոյ վաճառէ զկեղծիս: Զի՞նչ ընթերցցի քեզ քաղեայն, զի տայ[լ]⁽⁵⁾ քեզ վրաս վարձուք: Առնու ի քէն զապտութիւն, եւ տայ քեզ

զպահասութիւն: Որդոց լինելոյ կարաւտիս, մի՞ ստանար երկուս վրասս: Զի առնուլ է մէջ քո ի ծննդեանէ, եւ ծննդի խորհուրդ քո զպարախ: Եւ ծնցի քեզ ամուսութիւն քո մեզս եւ պա՛րաս ընդ ծննդոց: Եւ ինչ կամիս ստանալ ծնունդ, կարուսանե՛ս զողիս քո: Տես զի ի ժամ նեղութեան, անձնդ լա՛ւ է քան⁽¹⁾ զամենայն: Ազաթք կարեն ի խուցանել զքեզ⁽²⁾ բանալի որ բանա[լ]⁽³⁾ զամուսութիւն: Կոպէ աւրհնեցան մէջք ամուսլք: Ծնան աճեցուցին եւ բաղմեցուցին⁽⁴⁾: Կամիս թէ սիրեացիս յանէ քումմէ, տես զի մի՞ տեսեցէ քեզ Աստուած: Սիրեա չափով զամուսին քո, եւ առանց չափոյ զԱստուած քո: Տես անմիտ, զի Աստուած քո քաջ սիրէ քեզ քան զամուսին քո: Այլ քո եթէ մեղցիս այսաւր լայ, եւ վաղիւ մտանայ: Տէր քո ո՛չ մտանայ գէր քո: Յարուցանէ եւ տունի յառապատ իւր: Եղիցի քեզ այրդ ժամանակեան, փոքր ապաւէնութեան⁽⁵⁾ վաճառակեան: Եղիցի քեզ կենդանին յախտելից, ապաւինութիւն որ ոչ ստի: Եւ խեցէ՛ք այսուհետեւ ամուսլք զգուսն բարերար սուտղին: Ո՞ տայ ծնունդ ամուսլ միջոյ, եթէ ոչ այն որ արդեւն զնոսս: Որ կապեաց զամուսլութիւն, նո՛յն կարէ արձակել զնա: Կամք իւր են բանալի, բանայ եւ բակէ՛ զորովայնս: Որ աճեցոյցն եւ բաղմեցոյցն զծնունդս, նո՛յն կարէ եւ⁽⁶⁾ անգաւակել: Երկիցէ ի նմանէ ծննդակեան, զի կարո՞ղ է անգաւակել զնա: Կացցէ⁽⁷⁾ յաղաթս եւ ամուսն, զի կարո՞ղ է բանալ զմէջ նորս: Կերբն են երկոքին կամայն, որ զամենայն կարեն կատարել: Ամ լուրցէ ամուսլութիւն, եթէ ոչ կամայ հաստչին իւրոյ: Ո՞ բանայ զգործնս մանկանց, եթէ ոչ հրաման արարչին: Ո ընու զտունս արդացոց, եթէ ոչ նկարի՛չ սողմից: Հասաչին իւրեանց լսեն անգամքն այն իբրեւ զընարդոս: Աստուածութեանն ունկեղիւր

(1) Բառ այլուստ անձանթ:
 (2) Իմա՞՛ գլխուսն:
 (3) Հմտ. Դ. Թագ. Ա. 9 66.
 (4) Օր. ունիւր՝ Ա, յոր յաւելու ուղղիցն՝ Բ
 (5) Օր. գրէ առանց չ:

(1) Օր. վրիպանօր գրեալ ունիւր՝ Բ ամենայն. ուղղիցն զիւ ի վերայ տողին՝ ան գ:
 (2) Թուի՛ թէ ընթեռնի՛ Բեզ:
 (3) Օր. գրէ առանց չ:
 (4) Թերեւս ընթեռնի լ՛ բաղմեցուցին:
 (5) Թերեւս ընթեռնի լ՛ ապաւնուրիւն, որ պակասէ ի բառգիրս:
 (6) Յաւելուած ուղղիցն:
 (7) Օր. գրէ՛ կացց, ուղղիցն յաւելու՛ է:

լինին, ի զուժիւն, ի ծնունդ, եւ ի սնունդ, եւ ազատութեան հնազանդին, ի ջան, եւ ի գործ, եւ ի վաստակ: Ոչ զմերն տունու ի մէջ, եւ ոչ զիւրն տայ մեզ: Նորա՛ է հաստիկ եւ տալ ծնանել, զի ա՛յս է իշխանութիւն ազատութեան: Ի բարերարն ապուինեցայք յզիք, զի սաստեցե՛ յապականիչ երկունս: Իրրեւ զփայլատակունս բարկութեան եւ ողջունի են երկունք ծննդեանն եւ մահու: Եթէ կամի խաղաղ փոյլաւակունք, առնին բարկութեան փայլատակունք: Եթէ կամի երկունք ծննդեան, առնի երկունք մահու: Յիշեցէք զի հանգերձեալ էք կալ յաշտեան մահու: Երբ զրեցէք ի նմանէ նախ քան զվիշտս, զի եղիցի բնակաւոր ի ժամ վշտի: Առաքել զգործութիւնս զեղեալս, եւ կակզացուցանել զերկունս խիստս: Աղաչեացին զնա եւ ծննդականք, զի սնուցե՛ զպատուան զոր ետ: Չի որ արար զնոսս յիս, աբասցէ զնոսս մանկունս: Որ արարն ստե՛նաճատոյցս⁽¹⁾, արասցէ զնոսս պատանին: Որ արարն զնոսս երիտասարդս, արասցէ զնոսս ծե՛րս եւ աշուրս: Յաշտեանէն մանկութեան, ածցէ յաշտեան ձերտութեան: Յայսմ ամենայնի ի տիս, նա սնուցանէ եւ յաւրինէ: Ամենայնի զի գրեաց Աստուած զանուանս ամուլ կանանց, զի ուսուցէ թէ զիւրդ սիրեացին, եւ որպէս խնդրեացին ի նմանէ: Չի աղի արդար կանանց, յաղեցին անհամ կանայք, եւ խմորով ծանր կանանց, խմորեացին հասցին լիտիք: Եւ հայելեալ ցածնոցն, կատարեցին թերացեալքն: Գոյին զիւթութիւնք յաւաւրս նոցա, եւ ատեցին զգիւթս եւ զգիւթութիւնս: Գոյին կախարհութիւնք, ի դարս նոցա, եւ անարգեցին զկախարհիսն⁽²⁾ եւ զկախարհս: Եւ զպատեալ խարէին քաղեայք, եւ նոքա պատեցան ճշմարտութեամբք: Ի մէջ այնպիսի մոլորելոց, ոչ աստանդեցան. զգատտացեալք ի միում ապաւինութեան⁽³⁾: Աղաչեցին զմի ամենատուր կամս այն. իրրեւ ի մէջ մարտի կային, յորժամ հայէին ի նոսս մոլորեալքն: Կարգային միւսք, եւ չեղեն լսելի: Եւ յաճախեցին այսպ-

նեցին զիւթք այն, կարգային դամբս եւ ոչ առին զուր: Եւ յաճախեցին Կենդնեցին⁽⁴⁾ քաղեայք, հայցեցին ընդերկար եւ ոչ առին: Յաճախեցին հայցեցին կախարհք, եւ իրրեւ քննեցաւ աջ այն հայհոյեաց, յաղեցաւ ձախ այն, երեւեցաւ յանկարծ տալին իրրեւ առեալ զայր ըզհատուցումն: Հատոյց զգործութիւնս աջ այն, եւ ետ կորանս ձախ այն: Ասին որովայնք զպատուս իւրեանց, եւ յաճախեցին նոխատինք զիւթաց: Բարձին գիրկք⁽⁵⁾ զընծունցս իւրեանց, յաճախեաց ամաւթքաղէիցն: Գըզուցին եւ զիացուցին ածուլք, զարացան պատկասանք կախարհաց: Եղեն յորդոց նոցա գատուորք, եւ ի ծննդոց նոցա փրկիչք: Եղեն ի նոցանէ քտանայք եւ թաղաւորք երգիչք եւ մարգարէք: Եղեն նախանձաւորք յորդոց նոցա, եւ հաշտեցին զգիւթս այն: Եղեն ի նոցանէ թաղաւորք եւ արգարք, եւ սպառեցին հատին զքաղեայս: Առվսէս զլուխ նախանձաւորաց, տանջեաց հաշտեաց զըկախարհսն: Չի ծաղր արարին զարդար կանայս, տանջեցան ի ծննդոց նոցա: Չի այսնեցին զգատտացեալս, կոտորեցան յանգրանկաց նոցա: Չի հայհոյեցին զամուլս այն, խլեցին զնոսս որդիք ամուլ: Եւ մանեցէք անմիտ կանայք զգատտացելոցն որ հայցեցին եւ առին: Չի յամեցին առ ըբրունս տուողին, խնդացոյց զընոսս պարգեւ նորա: Որ հայցէ, առա՛ւղ է: Եւ որ ձանձրանայ խափանեալ է: Որ խնդրէ կարկառո՛ւ նմա. եւ որ յամէ յաւելու նրմա⁽⁶⁾: յամէ տալ տուաւզն, զի եկեցե՛ ընդ նմա բազում: Որչափ զաւրանայ խրնդրումքն, նոյնչափ մեծանայ պարգեւքն: Չիք որ ի մեծ աղաչանս տայ պարգեւ սակաւ եւ փոքր: Չիք որ ի գոյն աղաչանս տայ պարգեւ պատուական: Ըստ մարգարտի⁽⁷⁾ զինք նորա, եւ ըստ խնդրումոց պարգեւք նորա: Արդ յաճախեցուք ըզխնդրումս, զի յաճախեցին մեզ պարգեւք: Աղաղակեցուք ի գրանէ տուա-

(1) Անձանոթ բառ (տ. վեր.):
 (2) Ի բառագիրս չիւր:
 (3) Օր. ունէր ապաւինութիւն. գոր ուղղիչն փոխէ ի—բիւն:

(4) Օր. ունէր՝ եկեղեցիք. ուղղիչն զնէ և ի վերայ բառին:
 (5) Օր. ունի վրիպանօր զիկի:
 (6) Բառրդ՝ չեւ որ յամէ յաւելու եմա՞ յաւելեալ են ի լուսանցս ի մեծ ուղղիչն:
 (7) Օր. վրիպանօր ի բաց թողու զառազ ագոր յաւելու ուղղիչն:

զին, եւ ո՛չ արհամարհեն զմեզ շնորհք նորա: Արուժ խնդրէ տա՛յ նմա: Եւ որ երկմտի, արհամարհէ՛ զնա: Առնի գռռն տրւողին, բո՛ւք ա՛յնմ որ բախէն զնա: Արբախէ եւ անցանէ զնայ, եցոյց եթէ յերկրա՛յս է ամեն եւին: Ար յամէ եւ ձանձրանայ, եցոյց զսէր իւր զի խարեո՛յ է: Իսկ որ հաւատայ համտուաւ է թի (¹) ոչ առնու, ոչ լուսցէ: Նեղե՛ն եւ ասիպեն հաւատաքն զպորգեւն, զի եկեղէ կլցէ: Քանզի հաւատաք եւեթ կարող են բանայ ըզգրուես առաջի իբր: Պորգեւ ա՛յն ի ներքոյ դրան է (²), եւ հայցաւզն արտաքոյ դրան: Հայի տեսանէ պորգեւ ա՛յն զհայցաւզ, թէ զիսո՛րք է քանի՛ է: Եթէ յերկրայս կոչէ զնա, ո՛չ ելանէ: Զի մի՛ լկտեսցի: Եւ եթէ զոյ ի նմա ծալութիւն ոչ եւլանէ, զի մի անարգեցի: Եւ եթէ զոյ ի նմա բաժանուսն ոչ կլանէ, զի մի՛ թեթեւացի: Եթէ չիք սէր նորա առ նա ոչ եւլանէ զի մի՛ ալպնեցի: Եթէ չէ առ նմա, ամենեւին (³) ոչ տայ նմա պատասխանի:

Ձեռ ներսն անկանախոր անն, եւ անշար զիսեակն յիշեցի ի Տե Բրիտսու եւ գիտագուս ևորուն զձեռու սեսսսսսսսս զի սաս երկարեցի սակաբ ինչ յաղաղութեան եւ անկ արհայրեանն երկրամանի յիցին: Եւ զՅունանն զրիչ:

Հրուպարակեաց (Շար.) Յ. Յ. Մ.

(¹) Թերես ընթերցի է՝ համաւաս երէ:
 (²) Թր. ունի՛ գրանէ:
 (³) Թր. վրիպանօր զրէ՛ ամենին:

ՈՒՂՂԵԼԻՔ

- ի Եւրոպրաց հասածի Ասացուածոց Ս. Երիւնի էջ 78 ա. ա. 24 ի ներք. ընթ. ուսուցիչ արուեսին
- » 78 բ. ա. 10 ի ներք. յառաջ քան զբանալի կարկտայր զնէլի է վերջակէտ
- » 79 ա. ա. 14 ի ներք. ընթ. կոստրեցան
- » 79 ա. ա. 12 ի ներք. ընթ. վերացաւ եւ կրակեցաւ
- » 79 բ. ա. 19 ի վեր. ընթ. Միտարի վիտարի

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԳՈՐԻԵԱՆ ՅՈՒՆԵԼԵԱՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Գուրեան Յարկեանի կեդրնն. Յանձնաժողովը մեծ գոհունակութեամբ արձանագրեց իր Մայիս 22, Գչ. օրուան նիստին մէջ ա՛յն անդեկութիւնը թէ նիւ Եսրքի մէջ, Ս. Աթոսիս կիւրղենիկան ընծայարանի Բարերար Ազն. Տիար Պատրիկ կիւրղենիկանի Առեւտագետութեամբ եւ Ամերիկայի նախորդ առաջնորդ Գեր. Տիրայր Ս. Արքեպի. Կատուակայ նախագահութեամբ կազմուած է մարմին մը. **Գուրեան Յարկեանի Ամերիկական Յանձնաժողով անունով** Այս մարմինը ընտրած է իր գրեանը, եւ առաջին առիթով հետեւեալ յայտարարութիւնը հրատարակած է Ամերիկայի հայ թերթերուն մէջ, ծանուցանելով իր կազմութիւնը:

Վստահ ենք որ Ամերիկայի հայութիւնը սիրայածար պիտի փոխարինէ Պատ. Յանձնաժողովին կողմ իր հանրածանօթ առատաձեռնութեամբ:

Խմբագր. ՍԻՌՆԻ

Ամեն. Գուրեան Ս. Պատրիարք Հօր Քանաչայութեան Յիմնական Յարկեանը յառաջիկայ Աշնան հանդիսաւորայես տանկու նպատակաւ կազմուած կեդրոնական Յանձնաժողովն, իր Փետր. 11 թիւ նամակով կոչ բրած էր Տիար Պատրիկ կիւրղենիկանի, որ իր նախագահութեան տակ սպանով յօժարակաւ մասնակցութիւնը Ամերիկահայութեան:

Ի պատասխան այն կոչին, Տիար կիւրղենիկան Ապրիլ 11-ին իր գրասենեակին մէջ խորհրդակցութեան հրաւիրած ըլլալով կարգ մը ազգայիններ, անոնց պաշտօնապէս հաղորդեց **Գուրեան Յարկեանի** այն առաջադրութիւնը:

Ներկաներն ամբողջ եւ անոնք որ կը բացակայէին, ըրանացի եւ թէ զրուար, ջերմ համակրութիւն յայնչեցին որ Ամերիկահայութեան մասնակցութիւնը արժանապախ ջոյց մը ըլլայ այն խորունկ եւ սիրալիր յարգանքին, զոր համօրէն ազգը կը տածէ հանգէպ իր Արքայան Պատրիարքին:

Տեղի ունեցող կարգ մը նախնական խորհրդակցութիւններէ վերջ, կազմուեցաւ մարմին մը — **Գուրեան Յարկեանի Ամերիկական Յանձնաժողով** — հետեւեալ կերպով. — Գեր. Տիրայր Արքեպի. Յովնաննիւստն, Պատուակայ նախագահ, Տիար Պատրիկ կիւրղենիկան՝ Առեւտագետ, Տիար Տ. Ա. Տիրիմեան՝ Առեւտագիր, Տիար Յակոբ Թօփալեան՝ Գանձագետ, Տիար Յակոբ Աստուան, Տիար Յակոբ Խաչմանան, Տիար Երուանդ Մեխակեան: Խորհրդական անգամբ:

Տորթ. Ս. Յ. Արգարեան, Տորթ. Վ. Ս. Ամատուանի, Գեր. Մամրէ վրդ. Գալփեան, Տիար Յ. Ա. Գամպեր, Գեր. Շահէ վրդ. Գաուպեան, Տիար Արշակ Գաբակեօզեան, Տիար Վահրամ Գրիգորեան, Տիար Ռուբէն Գարրինեան, Տորթ. Յովնաննէս Գերկանեան, Տիար Միքայա Յ. Թրիքարեան, Տիար Հայկ Խոստարեան, Տիար Ն. Կիւրչիկեան,

Տիար Պետրոս Կէօզմիւր, Տիար Յ. Միքայէլեան, Տիար Արմենակ Նազար, Տիար Լուսն Պապայան, Տիար Խոտրով Պապայան, Տիար Յակոբ Պարոյան, Վեր. Խ. Կ. Պէնէկեան, Տիար Յովհ. Տօնէլեան, Տիար Վահան Քիւրքեան:

Դուրեան Յօրեկեանի Ամեր. Յանձնաժողովը մի առաջադրէ: Ղիմում կատարել պաշտօնական մարմիններու եւ թէ յայանի Ազգայիններու մաս, անդրական մասնաճիւղեր կազմելով գործին աջակցելու:

Դուրեան Յօրեկեանի Ամեր. Յանձնաժողովի Աստուծոյ խնայող Ս. Ա. Տ. Բ. Բ. Ն. Ա. ՊԱՏԻՎ ԿԻՎՊՆԵՎԵՆ

ԳՈՒՐԵԱՆ ՄԱՍՆԱՊԱՐԱՆԻ

Պուրեանի Մասնապարտանի շինութեան ի նըպատ անձառական նուէրներ.

Պ. Նշան Մաղարեան, Նիւ ետրէն 10 Սթէրլին
Պ. Մանուկ Կարապետեան, Ժընէվ
վըն 1000 Ֆրանկ. Յրանք

Պարսիզակցի Պ. Կարապետ Մելրոնեան, Կ. Պոլիսէն 1 Սթէրլին

Պ. Պաղասար Կոզեան, Խամայի-լիէն, երկու տպագիր գիրք (Բժշկարան շոգեւոր եւ Քրակամութիւն, Սիմէն Վրդ Յուզայեցոյ) եւ 1 Նգ. Լիրա

ՊԱՏԿԱԿԱՆ ՀԱՆԳԵՄՆԵՐ

Այս տարի Չափիը շատ ուշ տնտեսեալ երեսուցէն մէջ, ո՛չ միայն Հին Տոմարի յառաջ քերած տարբերութեամբ, այլ նաեւ Չափիկ տնտեսի 35 օրերու մէջ շարժականութեան հետեւանելով, սնուէս որ երբ Լատինը Նոր Տոմարով Չափիը տօնեցին Մարտ 31ին, մենք եւ Յոյնք տօնեցինք Մայիս 3ին: Պաղասարին խորշակն ալ այս տարի փչեց զտակական ճանդէներու շրջանին եւ քուտակն նեղեց ժողովուրդը: Բայց նախառակ ստոր՝ խանդակաւութիւն կար Սուրբ Քաղաքին մէջ, շարժիւ աշխարհիսամէն կորովն ու ամէն եկեղեցիէն ու դաւանանքէն եկած այլաբան ուխտաւորներու ներկայութեան:

Այս բազմութեան մէջ շատ համառու էր հայ ուխտաւորներուն թիւը, 385 հոգի միայն, որոնց 272ր Սիւրիայէն, 72ր Եգիպտոսէն, 22ր Պաղեստինէն, եւայլն, 10ր Կ. Պոլսէն, եւ 9ր Ամերիկայէն:

Ամէնքն ալ բարեպաշտութեամբ ներկայ եղան հանդէսներուն եւ ջերմածանց ոգիով կատարեցին իրենց ուխտերն ու հոգեւոր պարտականութիւնները:

Չափական հանդէսները կ'սկսին Ս. Յարութեան ամսաճարին մէջ, յնազանգարով, որու Հաւատարմութիւնն ու թափօրին հանդիսակիրն էր Բարզէն Սրբազան: Դուրեանը կատարուեցաւ Ս. Յակոբայ Տափին մէջ, վարագոյններ բանայու աւանդական սովորութիւնը զուարթօրէն կատարուեցաւ հասարակական նուիրաբարեկամութեամբ: Այս առթիւ պատրաստուած պատրիարքական կոնգրակը կարգաց շոգ. Տ. Կիրեղ վրդ. Խորայէլեան: Այր եւ կին, մեծ ու փոքր, բոլոր կնքաճարներ շափիկներ հազած, եւ ձեռքերնին փառ մոխր, ներկայացան Ս. Պատրիարքին եւ առ ին Նորին Ամեն, Սրբազնութեան նախական օրճնութիւնները:

Աւագ եշ. Մայիս 2. ճաշու ժամին պատարագը մատուցեց Լուսարարայեալ Մեսրոպ Սրբազան:

Ճաշու գիրքին մէջ գրուած յորդորական բարոզք, ուղղուած հաղորդութեան պատրաստուողներուն, Ս. Պատրիարք շայրը կարգաց ընտիր աշխարհարարով, արթնցնելով ժողովուրդին ուշադիր հետաքրքրութիւնը: Ինչպէս Ընծայարանի Սարկաւազունք եւ ժառանգաւորաց վարժարանի աշակերտներ, նոյնպէս հաւատացեալներու մեծ բազմութիւն մը հաղորդուեցան, յիշեցնելով մայր հայրենիքի եկեղեցիները ոգեւորող ջերմեւանդութիւնը:

Երեկոյան ժամուն Ս. Պատրիարք շայրը կատարեց Սանդուղի արարողութիւնը, որ հրաշալի տպարութիւն ըրաւ բոլոր ժողովուրդին վրայ: Անդուայի հազեցող տաղերը կրգեցին աղչուելը: Տարթ. Սանդուղի Կարապետեանի առաջնորդութեամբ կրուատղէմի Անկիլիան Եպս. Գեր. Մէկինէտ Սրբազան, Պաղեստինի Բարձր Գովաէր Ն. Վ. Սրբ Ննն Խոսքըթ Զէնարըր իր ընտանիքի անդամներով, Պաղեստինի կառավարութեան պետական Բարտուղար Ն. Վ. Սր. Լիւր եւ երեսուցէմի կառավարիչ Ն. Վ. Սր. Քիթրոյ իրեն ընտանեաց անդամներով, ինչպէս նաեւ ուրիշ պետական ու պաշտօնական անձնաւորութիւններ եւ բազմաթիւ երազակի ու Ամերիկացի բրիտանեաններ ներկայ էին այս խորհրդաւոր հանդէսին, որոնք շայց, եկեղեցեայ հոգեւոր ներշնչութեամբ տակ հմայուած մեկնեցան:

Գեր. Մէկինէտ Եպս., Ամեն. Ս. Պատրիարք շորմէն յետոյ, անդիտելի կարգաց Սանդուղի աւետարտը, գինատաւորուած մեր եկեղեցեայ շուքաւով, խոյրով եւ ձեռքը գաւազան:

Աւագ Սրբաթու Չարչարանաց Յիշատակը կատարուեցաւ գիշերը եւ աւուր պատշաճի բարոզ խօսեցաւ շոգ. Տ. Յովսէփ Ծ. Վ. Կարապետեան:

Լուսաւորեալի միջեկեղեցական հանդէսը կատարուեցաւ այս տարի առանց ռեւէ միջադէպի, հակառակ խոսուներամ եւ խոսնիշտարանս բազմութեանք այլաբան ախտաւորներուն:

Հանդէսին նախադասեց Պարկին. Փոխանորդ Գեր. Տ. Մկրտիչ Եպս. Աղաւունդի. իսկ Լուսաւորեալի թափօրին, Ս. Կերեզմանի շուք, հանդիսակետն եղաւ Լուսահան շոգ. Տ. Մուշեղ վրդ. շայրակոտեան:

Ս. Չափիկ առաւուն, Մայիս 5, Կիր. մեծ աւետարտութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան Տափին մէջ: Թափօրին նախադասեց Լուսարարայեալ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազան, իսկ Ս. Պատարագը մատուցեց Գեր. Տ. Մկրտիչ Եպս. Աղաւունդի եւ աւուր պատշաճի բարոզով մխիթարեց ուխտաւորները:

Երեկոյան հանդիսաւոր Անդատանին, որ կը կատարուի Ս. Յակոբի մեծ բակին մէջ, հանդիսակիրն եղաւ Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Սրբազան:

Չափիկ Մեհեկոյցին (Մայիս 6, Բշ) Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Փրկիչ փանրի գաւթին մէջ: Չափիկ Մեհեկոյցին է նաեւ «Յիշատակ բիւրաւոր հանասակաց յընթաց համաշխարհային պատերազմին»: Այս առթիւ Ս. Պատարագը մատուցեց Ս. Աթուխ միաբաններէն Ռեմէլի տեսուչ շոգ. Տ. Ներսէս վրդ. Թորոտեան. իսկ բարոզը խօսեցաւ

Գիր. Տ. Թորգոմ Սրբազան։ Ս. Պատարագի աւարտումին՝ հոգեհանգստեան առաջին պաշտամանէրը կատարուեցաւ նոյն ինքն Ս. Փրկչի գաւթին մէջ, որ ամբողջ զերգեհանատուն մըն է Ս. Աթոռիս հանգուցեալ Պատրիարքներուն եւ Լուսարարապետներուն եւ նշանաւոր եկեղեցականներու համար։ Իսկ երկրորդ համազգային հոգեհանգստար սեպի ունեցաւ Ս. Փրկչի հասարակաց զերգեհանատան մէջ, Արարայի նահատակներու Յուշարձանին շուրջ, որ հոգեհանգստեան պաշտօնէն նորր խոսեցաւ ժառանգաւորաց Վարժարանի ուսուցիչներէն Տիար Գրիգոր Միսիսիան։

Հասկանալի հանդէսները երուսաղէմի մէջ կ'երկարին մինչեւ Հոգեգալուստ, եւ ուխտաւորներէն շատ բիշէր միայն կ'ստանան յիստն օր։ Ս. Աթոռը այս միջոցին, հնարաւոր կարգադրութիւնները կ'ընէ, որպէսզի աստուածային պաշտամանէրը կատարուի երուսաղէմի յատուկ մեծփայելուքեամբ։

Պաշկաստի ու եղիպտոսի երկաթաղիներու վարչաւորները մեծ դերութիւն կ'ընծայեն ուխտաւորներու, փոխադրութեան ասկը կէտակէտ զեղջեյալ։ Միտ կողմէն, Պաշկաստի ու Սիւրիոյ մէջ ուխտաւորներ կ'օգտուին օրօններէն, որոնք կը մըրջին երկաթաղիներու հետ, աժան եւ աւելի արագ փոխադրութեան կողմէն։ Յուսայի է որ Հայտնիներ, իր անտեսական կեանքին բարեբաւումով, հետզհետէ պիտի կրնայ իր կանոնաւոր եւ փայլուն ուխտագնացութեամբ առաջնէ անոր բռնել Սուրբ-Քաղարի մէջ՝ արեւելեան ժողովուրդներու շարքին, իբրեւ ապացոյց իր հայրենի գիտակցութեան եւ ջերմ հաւատարմին, իր հայրենաւանդ նախանձանկորութեան եւ այն սիրոյն զոր կը տածէ ինքն հանդէպ Սրբոց մակորեանց այս պանծալի հաստատութեան, որ Հայտնեան կոթողը եղած է դարերէ ի վեր երուսաղէմի մէջ, բարձր պահելով Հայաստանեայց եկեղեցոյ դիրքը յարանաւանական զօրաւոր մրցակցութիւններու մէջ։

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԱՏԱԿ ԱՌԹԻՒ

Ս. Չասկի սօնին առբիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայր, Մայիս 6-9, Պատրիարքաւորնա զանլինին մէջ քննուեցաւ շնորհաւորական այցելութիւններ երուսաղէմի Քաղաքացե Ն. Վ. Բաղրպ Պէյ Նաւաւայիի, Ամերիկեան, Իտալական, Գերմանական, Յունական եւ եղիպտական Հիւպատոսներուն, ինչպէս նաեւ Լատինաց Ս. Պատրիարքին, Իտալականաց Մեծաւորին (Քիւրսոս), Ռուսաց Աբեղային, Վալսիներու, Ասորիներու եւ Հապլեներու Տեսչներուն, Գերման եւ Յուն Կարդիկալ վաներու Մեծաւորներուն, նոյնպէս երուսաղէմի օսարարի ականաւոր անձնաւորութեան։

Երուսաղէմի անկլիխան եպօ. Գեռ. Մէկիմէս եպօ. անձամբ այցելեց Ս. Պատրիարքին Մայիս 7, Գե. օր։

Յունաց Ս. Պատրիարքին կողմէն, Պսէկն. Փոխանորդ Սրբազանը, աւանդական շախմատով, Մայիս 9ին եկաւ շնորհաւորելու Ս. Չասկի մեր Ս. Պատրիարք Հօր։

ՓՈՍԽԱՎԱՐԸ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն, Պսէկն. Փոխանորդ Գեռ. Ս. Միքէիլ եպօ. Ազաւանցի, աւանդական

ժախմատով, Ս. Չասկի սօնին առբիւ, Մայիս 8 ին փոխադարձ այցելութիւններ տուաւ Յունաց Պատրիարքին, Ռուսաց Աբեղայիպոսին, Վալսիներու, Ասորիներու եւ Հապլեներու վաներուն։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Գարնայ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն, Գեռ. Ս. Միքէիլ եպօ. Ազաւանցի, իր հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Իսրայէլեանը, ներկայ գրտուեցաւ Մայիս 3 ին Բոլնիոյ Հիւպատոսներ՝ Բոլնիոյ Ազգային Տօնին առբիւ կատարուած պատճառական քննուեցութեան, եւ Թարգման Հոգ. Տ. Տրգոս Վրդ. Պէպլեանցի հետ Մայիս 10 ին՝ Ռուսական Հիւպատոսներ, Ռուսացիոյ Ազգային Տօնին առբիւ կատարուած պատճառական քննուեցութեան, իսկ Մայիս 13ին եղիպտոսի ճորճիքի Հիւպատոսին այցելեց շնորհաւորելու համար Ն. Վսեմաւորեան պատճառ. եւ Մայիս 14ին ալ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. ի հետ ներկայ գտնուեցաւ երուսաղէմի Անկլիխան եպօ. Մէկիմէս Սրբազանի սարեկան քննադատին։

ՂՈՒՐՊԱՆ ՊԱՅՐԱՄԻ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր, իր հետն ունենալով Պսէկն. Փոխանորդ Սրբազանը եւ վարդապետներ, Չարպան Պայրամի առբիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ Պսէկսիին Միւրթի Վսեմ. Էյ Հանն Էլիմ էյ Հիւսէյնի, իսկ Փոխանորդ Սրբազանը միեւնոյն օր այցելեց Քաղաքացե Վսեմ. Բաղրպ Պէյ Նաւաւայիի, Օպլէն. Կառավարիչ Վսեմ. Բուրի Պէյ Ապսէլ Հասի եւ Քաղաքիս ականաւոր Եպիսկոպոսներունց անները եւ շնորհաւորական այցեխաբէր բողոց Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն։

ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս որ արձանագրուած էր Միսնի մախողը բիւիս մէջ (էջ 159), քաճ Տօրէի Ժողովի որոշման, Ս. Արտախ Երեմեայ Տեսչ Գեռ. Տ. Մասթոն եպօ. Գայրգեան եւ Գիւսանայե Տիար Կարապետ Նաւեան Սիւրիա մեկնած էին Ապրիլ 14ին, Կիլիկիոյ Ս. Կարդիկոսին փոխանցելու Պէրուրի, Գաճակոսի եւ Լատիոլիկի երուսաղէմացական վաները, եկեղեցիներ եւ վարժարաններ։ Ս. Արտախ ներկայացուցիւներ երուսաղէմ վերադարձան Ապրիլ 30, Գե. երեկ իրենց յանձնուած պատճառ կատարելէ ետք։

Գաճակոսի բեմին Կարդիկոսական Փոխանորդ նշանակուած է Վեմ. Կարդիկոսի կողմէն Հոգ. Տ. Խապ. Ն. Վրդ. Ազաւանցի, իսկ Լատիոլիկի մէջ, Կ. Ս. Օժուրեան փոխարին համաձայն, Ամեն. Ս. Պատրիարք Հայր քոյ տուած է որ Ս. Արտախ Միսթոն Հոգ. Տ. Վսեմ Վրդ. Գեռգեան շաւուսակէ իր պատճառներ մինչեւ որ վերջին ձեռք տալ այդ բեմին կազմակերպութեան։

Շուտ ուրախակի է որ Ս. Արտախ կողմէն Կիլիկիոյ Կարդիկոսութեան կազմակերպութեան ի նպաստ քննարկուած այս դիւրութիւնը խորունկ խանգապաւորին մը յատկապէս իրենց Հայրութեան մէջ, եւ Վեմ. Կարդիկոս Պէրուրի բեմին ուղղեալ իր Կանգալին մէջ շատ զգուշութեամբ շուտուած ու զննուած է Ս. Արտախ եւ անոր Ամեն. Գաճակոսի կողմէ ցոյց տրուած այս զորձակցութիւնը։

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է
Ս. ԱԹՈՌԻՍ ՏՊԱՐԱՆԷՆ

Օրմանեան Սրբազանի Ա Չ Գ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ Ի ն

Վերջին եւ Գրգ Մասը

Նուպար փառայի, Պողոս փառայի եւ Օրմանեան Ս. ի պատկերներով

Ժամանակակից ազգային եկեղեցական պատմութիւն

1808 — 1910 Տարիներու

Գրեթէ 2000 երկիջեան երես. գին՝ 6 Ամերիկեան Տօլար. կամ
 24 Անգլիական Շիլին. փոստի ծախսը մեր վրայ:

Խ Ո Յ Ք Ե Ի Խ Օ Ս Ք

Լոյս տեսաւ Ս. Արողիս Տպարանէն հոգեւոյն Օրմանեան Սրբազանին ինննակենսագրութիւնը, ԽՈՅՔ ԵՒ ԽՕՍՔ շիտրսով: Ուրածալ 500 երեսնոց գիրք մը, սպագրուած ընկիւր բուրբի վրայ, հեղինակին ամէնէն վերջին լուսանկարով զարդարուած, գին Մէկ ՏՈԼԱՐ կամ 2ՈՐՍ ՇԻԼԻՆ ԱՆԳԼԻՍԱԿԱՆ:

Օրմանեան Սրբազան իր այս գիրքին մէջ շօշափած է իր մանկութենէն մինչեւ 1918, իր Դամասկոս սարագրութիւնը, իր կեանքին ու իր գործունէութեան բոլոր կողմերը, խօսած է իրեն ժամանակակից դէպքերու եւ դէմքերու վրայ, իրեն յատուկ ժողովրդական սահուն եւ ճանելի ոճով, որ մեծապէս հետաքրքրական դարձուցած է իր ճիւղը:

Դիմել Ս. Արողիս Տպարանի Տեսչութեան:

Մ Ս Ս Ո Ւ Լ Ր Տ Ա Կ Է

Գեր. Մկրտիչ Եպս. Աղանունիի ՄԻՊԱՐԱՆՔ ԵՒ ԱՅՅԵԼՈՒՄ ԷԴՅԵ ԵՐՈՒՍԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ գործը: Արդիւնք երկարատեւ պրոպագանդայի, որ կոչուած է ճետաբերական պահուս մը լիցնել շայ երուսաղէմի պատմութեան մէջ: Գործը յատուկ անուաներու բազմաթիւ մըն է ըստ ինքեան, ու պիտի բովանդակէ 1500 էտիկ անուաններ կենսագրական եւ պատմական տեղեկութիւններով ճոխացած:

Տպագրութենէն ետքը պիտի որոշուի գիրքին գինը:

1919 ֆորման տպագրուած է արդէն:

Անոնք որ կը փափաքին ունենալ այս գիրքը, կրնան այժմէն արձանագրել տալ իրենց անունը եւ հասցէն, զիմելով Տպարանի Տեսչութեան:

DIRECTION DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE

JÉRUSALEM — PALESTINE

ՄՍՏՅՈՒԱՆ ԳԻՐԳԵՐ

ՄՍՏՅՈՒԱՆ ԹԵՐԹԵՐ

9. LA ROSERAIE D'ARMÉNIE. III, Pages Choiesies des Meilleurs Poètes du moyen âge et de la période suivante: Frik—Constantin d'Erzenga—Hovannès de Telgouran—Arakel de Sunik—Arakel de Baghèche—Grégoire d'Akhtamar—Hovassape de Sébaste—Stépannos—Sargavak de Berdak—Evêque Hovhannès—David de Salatzor. VIEUX CHANTS ANONYMES. Anthologie nouvelle illustrée de nombreuses reproductions des plus belles miniatures de manuscrits anciens. Évangile de Gaghik, Rois de Kars—Bible de Rois Héthoum II—Lectonnaire du Roi Léon III—Bible d'Essat Netchétzi—Évangiles de Chikbak, de Gallitzor, de Balou, etc. et de diverses d'art arménien. Traduction précédée d'une introduction et accompagnée de notices par ARCHAG TCHOBANIAN, Paris, Lib. Ernest Leroux, 1929. un vol. 19X28 cm., XIX-291pages, Prix 100 francs.

5. **Նոր Անունդ, Ամազիք, Յունաստանի Հայ Բարձրակարգական Ընդհանուր Միութեան, Գ. Տարի, Նոր ՇՐՋԱՆ (Մարտին սկսեալ կը հրատարակուի). Տարեկան բաժանորդագրութիւն Յունաստանի՝ 60 Տրախմի, Ամերիկա՝ 1 Տար, Ֆրանսա եւ Սիւրիա 20 Լրանք, Թուրքիա 2 օսմ. սկիի, Աւրիւ երկիրներ՝ 4 Շիլին: Հասցէ. Revue Mensuelle NOR SEROUNT Poste Restante, le Pirée Grèce**

6. **ՊԱՀԱԿ. Ազգային, Գաղափական Եւ Օրոնայ բերր, Արժօնատր՝ Ե. Պատրիարք, իւրօրինակ թիւից զինք 1 Տրախմի. Հասցէ. Էկեաթիա Սրբա Գոյմպօ, քի 30:**
 7. ARCHIV ORIENTALNI. Journal of the Czechoslovak Oriental Institute, Prague, Editet by BedRich Hrozny'. Vol. I March 1929 N° 1, Praha. p. 90:

10. A Lecture delivered at « Galstann Park », by Mr. Mesroby J. Seth, M. R. A. S., on Sunday, the 12th February, 1928, on the occasion of the inaugural Garden Party of the Armenian Diocesan Educational Union (Calcutta). p. 11.

11. KHOJAH PETRUS. The armenian merchant—Diplomat of Calcutta, from 1756-1763, by Mesroby J. SETH, M. R. A. S. (London): A paper read at the Eleventh Meeting of the « Indian Historical Records Commission » held at Nagpur. C. P., in December, 1928. Calcutta, 1929, p. 17.

12. ՄԱՍԻՍ ՕՐԱՅՈՅՑ, (պատի) 1929. է. Տարի, կազմեց եւ հրատարակեց՝ **Հայի Աճեման**. Անդապատականի Հայոց Թեմական Տպարան, Թաւրիզ:

13. **Մեր Պատմութիւնը եւ ճոր սերունդը**, դասախօսութիւն մը Կ. Նույեանի, հրատարակեց Հայ Գրասիրաց Միութեան, Մարտիի, քի 1. Տպգր. Արարա, Մարտի, 1929, 8° էջ 33:

14. **Փարոբիկը** (խիս ծիմադաւար թուրքի մէկ արար). Գր. Բ. Տիւրքեան. Տպգր. Արամ Գասապեան Աղեթանդրիա, 1929. 8° էջ 16. Գին՝ 2 Ե. Գ.:

ԲՈՒԺԱՆԻ և ԳԻՏՈՒԹԻՒՆ

Առողջապահական և Գիտական ամսագրութիւն (միակը իրենց տեսակին մէջ) ՁՐԻ մէկ օրինակ ստանալու համար անմիջապէս հասցէ գրէ՛ M. DERSAHAKIAN 16, Rue Lamoriuière, Anvers (Belgique) կամ POUJANKI 126, Fb. St. Denis, Paris (X), France.

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Էնգարեցի Յակոբ Գրիգոր Օտապաշեան, 38 տարեկան, որ կը կարծուի ըլլալ Եւֆրատի կամ Հայֆրատի կողմերը: Ձինք ճանչցողներէն կը խնդրուի տեղեկութիւն տալ իր մօր՝ Էնգարեցի Տիկին Հոփսիմէ Օտապաշեանի. Հայկական Գէմք Թիւ 567 ՊԵՐՈՒԹ կամ Տ. Մերոպ Եպս. Նշանեանի Հայոց Պատրիարքարան ԵՐՈՒՍԱԴԵՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԵՐ

Հայաստան Թիւրքերէն

Թիւրքախօս Հայոց կողմէն եղած խնդրանքին վրայ Ս. Գրիգոր Լուսաւորչին հայաստան թիւրքերէն ծանօթ պատմութիւնը, վեցերորդ անգամ ըլլալով լոյս տեսած է Ս. Աթոռախ Տպարանէն, գեղեցիկ թուրքի վրայ, խոշոր տառերով, մաքուր տպագրութեամբ. Գին Մէկ անգլիական շիլին Գաղեստիւնի և Սիւրիոյ համար. իսկ Ամերիկեան 25 սենթ՝ միւս բոլոր երկիրներու համար: Փօստի ծախքը մեր վրայ: Տպարան Սրբոց Յակոբեանց

Բազմավասակ Ռուսիչ ու դասիարակ, Համբարձում Երամեան Վանի Երամեան Վարժարանի Հիմնադիր-Տնօրէնը, — որ բազմաթիւ սերունդներ հասցուցած եւ օժտած է զանոնք ազգային հեմարիս ոգիով ու հայրենասիրական մաքուր զգացումներով եւ քէ այդ սերունդներն այսօր նման Վանի գեղեցիկ ու ուղղաձիգ բարձրներուն, հասակ են նեցած ու նոխացած որոշ դիմեր գրաւելով ազգային կրթական ու առեւտրական մարզերու մէջ, — իր բազմամեայ կրթական գործունէութիւնը, յարակից ազգային դէպքերով ու ֆաղափական անցներով, մանրամասնօրէն գրի առած, կը փափաքի հրատարակութեան իր զայն եւ որպէս ազգային ներհնարան, հրիսակել զալիք սերունդներուն:

Ընդ առաջ երբայով ազգային յոգնաջան Վաստակաւորին սուաչարհին, կազմած ենք Յանձնախումբ մը, նպատակ ունենալով իրագործել բարի ծերունիին փափաքը:

Ներկայիս բացուած կը հռչակենք ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ-Ի ՅՈՒՇԱՐՁՍՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԵՐԿՆԱՏՈՐ, պատկերազարդ, 1400 էջոց երկապիւրօքիւնը: Ամբողջ գործին բաժանորդագրին է մէկ եգ. Ոսկի:

Ուստի կոչ կ'ընենք Հայ ժողովուրդի գիտակցական ոգիին, վստահ ըլլալով քէ ան դրապէս ֆաջալեր պիտի հանդիսանայ բազմամեայ վաստակաւորին ու պիտի փութայ այժմէն իսկ ապահովել օրինակ մը յիշեալ երկապիւրօքներէն երջանիկ առիքը ընծայելով անզուգական կրթական մշակին վայելելու իր կէս դարու յոգնաջան աշխատութեան արդիւնք ի լոյս ընծայելով ՅՈՒՇԱՐՁՍՆ մակագրութեամբ իր գրական աշխատութիւնը:

Բաժնեգրները եւ նուէրները պէտք է դրկել Յանձնախմբի Նախագան Գեր. Տ. Մամբրէ Ծ. Վրդ. Սիրունեանի, Աղեւսանդրոյ Առաջնորդարանի հասցեով:

Rév. Père MAMPRÉ SIROUNIAN - Communauté Arménienne
ALEXANDRIE (Egypte)

Գարձեալ ուրախութեամբ կը հաղորդենք քէ մեր Ամերիկայի Լիւզօր ներկայացուցիչն է Քրէզնօի Վասպուրականի Հայրենակցական Միութեան կողմէ ընտրուած Յանձնախումբը, որուն կ'աւանապետէ Տիար Միհրան Զիբունի եւ որուն պէտք են դրկել Ամերիկաբնակ ազգայինք, իրենց բաժնեգրին ու նուէրները: Հասցէ, Տիար Միհրան Զիբունի Կօօօրի. 2324 Ալվընիա Վանքիւրա Քրէզնօ (Գալիֆօրնիա) Ամերիկա

Mr. MIHRAN CHITUNI, Grocery
2324 Ventura Avenue. FREZNO (California), U. S. A.